

ՌԱԳԻՏԱԿԱՆ
ԲՈՑԱԿԱՆ
ԱԴԱՐԱՆ



Կ. ՎԵՏՄԱՆ

ԳՐՈՋՆՈՒ
ՆԱԿԹԱՅԱՆՔԵՐՈՒՄ

087.1

Կ-40

ՈՒՍԻՍԱՑԻՆ
ՈՎԿԱՍՍ



23 JUN 2009

ՅԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

037.1

Վ-40

Վ. ՎԵԼՏՄԱՆ

պ.

ԳՐՈՋՆՈՒ ՆԱՎԹԱՀԱՆՔԵՐՈՒՄ


ՅԵՐԿՐԱԾԻՆ ԼՈՒՍԲԱԺՆԻ ՄԵԹՈԴՍԵԿՏՈՐԻ ԳՐԻ
ՀԱՆՁՆՈՒԹՈՂՈՎԸ ԹՈՒՅԼՈՏՐԵԼ Ե ՀՅՈՒՄԻՍԱԹԻՆ
ԿՈՎԿԱՍԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թարգմ. Մ. ՓԻՐՈՒՄՅԱՆ



ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ «ՀՅՈՒՄԻՍԱԹԻՆ ԿՈՎԿԱՍ»
ԴՐՈՍՏՈՎ-ԴՈՆ 1933





49755 КМ



8662-53



Книгоиздательство
Северный Кавказ


1. ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԿՐԱԿ

Շուկայում ծախսատիկ նստած եր մի պարսիկ։ Նրա մո-
րուն ու յեղունգները հինա եյին զրած ու կարմիր եյին։ Նրա
առաջ, գունդգուն խսիրի վրա շարված եյին հոտոտ և մուգ
հեղուկով լցված կավե ամանները։ Այդ հեղուկն արեվի ճառա-
գայթների տակ յերփներանգ ցոլցւում եր։

Սա հնդկական Բե-
նարես քաղաքումն եր,
մեզանից 300 տարի ա-
ռաջ, տասնյոթերորդ դա-
րում։

Ինչպես հարուստ-
ները, նույնպես և չու-
նեփորները մոտենում ե-
յին պարսկին և գնում
այդ մուգ հեղուկից։ Այդ
հեղուկը բուժարար հատ-
կություն ուներ, բուժում
եր մարդկանց հիվանդու-
թյունները։ Այդպես եյին
մտածում Բենարեսի և
Արևելքի բնակիչները։

Բուժող հեղուկը բե-
րում եյին պարսիկ վա-
ճառականները հեռավոր լեռնաշխարհից։ Այդ հեղուկը թագնված
եր գետնի տակ, ճիշտ այնպես, ինչպես արյունը մարդու մարմ-
նում։ Տեղտեղ նա հուժկու շատրվաններով դուրս եր գալիս
գետնի յերեսը։ Յերբեմն այդ շատրվանները կապտավուն գա-
զից եյին լինում և հեշտությամբ բռնկվում եյին։ Կրակե այու-
նը ձգվում եր դեպի յերկինք։ Յերկինքը դիշերը կարմրին եր
տալիս, հեռունները վողողվում եյին վարդագույն լուսով։



Մարդիկ կարծում էին, թե այդ կրակի մեջ ինչ վոր աստ-
վածային ուժ կա: Նրանք յերկրպագում էին կրակի աստու-
ծուն և ի պատիվ նրան, տաճարներ էին շինում: Այդ տաճար-
ների մնացորդներից կան նաև մեր յերկրամասում, Չեչնիայում:

Վառվող շատրվանների շրջապատում ապրում էին կրա-
կապաշտները: Վաճառականները սիրով այցելում էին քար-
վաններով, ուղտերի ու ձիերի վրա, զինված ստրուկներով շրջ-
ապատված: Վաճառականները լեռնցի կրակապաշտներից գնում
էին գորգ, թանգարժեք փայտ և կապտավուն ստորերկրյա
գազը՝ «հավիտենական կրակի» աղբյուրը: Գազը խցանած ա-
մաններով նրանք տանում էին հեռավոր յերկրներ և այնտեղ
մեծ շահով ծախում այդ «սրբազան կրակը»:

Յերկրպագելով այդ կրակին, մարդիկ հետզհետե ուսում-
նասիրում էին այդ հեղուկը և պարզում նրա հատկություն-
ները: Նրանք նկատում էին, վոր վառվող գազին վաղ թե ուշ
հաջորդում է մուգ, ավազի հետ խառնված հեղուկ, վորը նույն-
պես շատ լավ վառվում է: Նրանք հավաքում էին այդ թանձր
հեղուկը և ոգտագործում, վորպես վառելանյութ: Հետո նրանք
հասկացան, վոր պետք է հորեր փորել և այնտեղից սափորնե-
րով «գետնի արյունը» հանել ճիշտ այնպես, ինչպես ջրհորնե-
րից դուրս են հանում ջուրը:

Այդ շատրվանների մեջ մենք վոչ մի խորհրդավորություն
ու գաղտնիք չենք տեսնում: Մենք այդ մուգ հեղուկը հորերից
մեքենաներով ենք հանում: Մենք կարողացել ենք մշակել այդ
հեղուկը և գործածել արտադրություն մեջ: Այդ հեղուկը—նավթն է:

Նավթը թանգարժեք վառելիք է շոգեկառքերի, շոգենավե-
րի, գործարանային կաթսաների համար. սև արյունը ջերմաց-
նում է շարժիչների ուրար՝ կյանք ու շարժողություն է տալիս
ավտոմեքենաներին:

Նավթ պարունակող ավազի շերտը շատ խորն է թողված:
Նավթից գազ է անջատվում: Գազը լայնանալով, նավթին դուրս
է բշտում գետնի մակերեսի վրա:

2. ԻՆՉՊԵՍ Ե ԱՌԱՋԱՑԵԼ ՆԱՎԹԸ

Շատ առաջ, յերբ մեր յերկրագունդը դեռ յերիտասարդ
էր, մեր որերից բոլորովին տարբեր կյանքով էր ապրում նա:

Մեր յերկրագնդի մակերեսի մեր որերից շատ ավելի մեծ
մասը ծածկված էր ջրով: Շատ շոգ էր և անվերջ անձրևի հե-

ղեղ էր թափվում: Կարծես կայծակների գերի սև ամպերից ընդ-
հանուր ջրհեղեղ էր հորդում:

Այժմյան ծառերի և խոտերի փոխարեն ցամաքի վրա ա-
ճում էին հսկայական պտերներ: Կաթնասուն կենդանիների
հետքն էլ չկար: Ծովերում ապրում էին ձկներ և պարզ կեն-
դանիներ—մոլլյուսկներ (կակղամորթեր):

Հաճախակի յերկրաշարժներն ու ջրհեղեղները փոխում
էին յերիտասարդ յերկրագնդի (պլանետի) դիրքը: Այնտեղ, ուր
ցամաք էր, ծովեր էին առաջանում, իսկ ուր ծովեր էին՝ ցա-
մաք էր ստեղծվում:

Այս հաճախակի փոփոխությունների հետևանքով մասսա-
յական կերպով փոփոխվում էին ահագին քանակությամբ կեն-
դանի եյակներ: Միլիոնավոր եյակներ թաղվում էին գետնի
տակ և ժամանակի ընթացքում փտում: Հազարավոր տարիների
ընթացքում նրանց ճարպը փոփոխության էր յենթարկվում և
վերածվում վառվող յուղային հեղուկի:

Մի շարք գիտնականներ այսպես են բացատրում նավթի
ծագումը: Այդ գիտնականներից մեկին հաջողվեց մեռած ձկնե-
րից ու խեցիներից մի հեղուկ ստանալ, վորն իր կազմով շատ
մոտ էր նավթին:

Հյուսիսային Կովկասում, Ափշերոնյան նավթահանքերում
փորքրիկ թանգարան կա, ուր հավաքված են նավթահորեր փո-
րելու ժամանակ ձեռք բերած նմուշներ: Այդ նմուշներից, հան-
քային տեսակներից մի քանիսի վրա պարզ յերևում են ձկան
հետքեր: Այդ թանգարանում կան նաև կես ձկան նմանու-
թյուն ունեցող զարմանալի ծովային կենդանիների քարացած
մասեր:

Ռուս մեծ քիմիկոս Մենդելեյեվը հետևյալ յենթադրու-
թյունն (գիտական լեզվով՝ հիպոթեզա) է արել:

Յերկրագնդի միջուկը կազմված է ածխածնի հետ միացած
շիկացած յերկաթից: Միջուկի ջերմության աստիճանն անասե-
լի բարձր է: Յերբ ջուրը յերկրի վերին շերտերից հասնում է
կենտրոնին, ապա նա միանում է շիկացած ածխածնին և նավթ
է առաջ գալիս:

Այսպես էր մտածում Մենդելեյեվը: Նավթի ծագումը բա-
ցատրող այլ յենթադրություններ էլ կան:

Մի քանիսն էլ ասում են, թե նավթը փտած բույսերից է
ստացվել: Աձխի մի քանի տեսակներից կարելի յե նավթ ստա-
նալ, իսկ, ինչպես հայտնի յե, ածուխը հողի ծանրության տակ
խտացած և քարացած ծառերից և պտերներից է կազմվել:

Դեռևս պարզված չէ, թե այդ բացատրություններից վերն
և ճիշտը: Հայտնի չէ, թե իսկապես յերկրի միջուկը կազմված
է շիկացած գազերից: Մի շարք գիտնականներ բոլորովին այլ
յենթադրություններ են անում:

Կարող են ասել, թե—միջին կարեւոր է իմանալ նավթի ծա-
գումը: Նավթ կա, մենք արդյունահանում ենք այն, ոգտագործում.
եւ ինչ է մնում: Միևնույնը չէ, թե նա վորտեղից է ստացվել:
Վոչ, միևնույնը չէ: Նավթի ստորերկրյա պաշարը մեծ է,
բայց յերբեկցե նա կսպառվի: Ամեն տարի հարյուրավոր մի-
լիոն տոնն նավթ է արդյունահանվում և սպառվում:

Ամերիկացիներ հաշվելով իրենց նավթի ստորերկրյա
պաշարը, յեկել են այն յեղրակացություն, վոր նա հերիք կանի
20 տարուց վոչ ավելի: Մեր նավթի պաշարն Ամերիկայի ու-
նեցածից շատ է: Մենք նավթատու ռայոններ շատ ունենք,
ուր դեռևս նավթարդյունահանում չենք սկսել: Հսկա պաշարն
եւ իր հերթին կսպառվի:

Յեթե մենք իմանանք, թե ինչպես է նավթն առաջացել,
ապա կկարողանանք արվեստական նավթ ստանալ, սկզբում լա-
բորատորիաներում, իսկ հետո՝ արդյունագործության կարգով:

Ահա ինչու համար են նավթի ծագումով հետաքրքրվում
աշխարհի գիտնականները:

3. Վ Ի Շ Կ Ա

Յերկրի կեղևը կազմված է զանազան շերտերից: Գետերի
սեպածն ավերին, սարալանջերի ուղիղ կտրվածքների վրա այդ
շերտերը պարզ յերևում են:


Փոփոխակի իրար հաջորդում են ավազի, կավի, կրի և այլ
պինդ հանքային տեսակների շերտերը:

Գիտությունն ասում է, վոր այդ շերտերից շատերը ժա-
մանակով յեղել են ծովի հատակ: Հազարավոր տարիների ըն-
թացքում մի շերտի վրա նոր շերտեր են նստել և ամրացել:
Այդ շերտերի մեջ միլիոնավոր տարիներ առաջ ապրած կեն-
դանիների մնացորդներ կան: Այդ մնացորդների հիման վրա
գիտնականները վորոշում են և նկարագրում մեր յերկրագնդի
անցյալ կյանքը:

Դիտեցեք 7-րդ եջի գծագրությունը:

Այնտեղ ցույց է տված յերկրագնդի կեղևի կտրվածքը:
Դուք տեսնում եք իրար վրա նստած զանազան շերտեր: Ան

գծերը նավթ արդյունակող ավազի շերտն են ցույց տալիս. նա հա-
վասար պատկած չէ, մեկ բարձրանում է վեր, մեկ իջնում է ցած:



Նավթ արդյունակող ավազում ուժեղ զազ կա: Նա մղում
է նավթը դեպի վեր, և այդ ճնշման տակ նավթը յերկրի յերեսն
է դուրս գալիս:

Յերբ ասում են «նավթի շատրվանը խփեց», դա նշանա-
կում է, վոր նավթը վերին շեր-
տերի միջով իր համար ճանա-
պարհ բացեց և դուրս յեկավ
գետնի մակերեսը:

Կարելի չէ հեշտացնել նավ-
թի կոխվը հանքերի շերտերի
դեմ. պետք է ոգնել նրան յեր-
կրի յերեսը դուրս գալու: Դրա
համար այնտեղ, ուր կա նավթ,
գետինը փորում են մեքենա-
ներով:


Մեքենաները հաստատվում
են հատուկ կառուցվածքների—
փիշկաների մեջ:

Ահա փիշկան:

Սա պարզ ձևի փիշկա յե:
Նոր մեծ ու բարդ մեքենաների
համար այժմ շինում են ավելի
մեծ և հուժկու փիշկաներ:

Յերբ հորը փորված է, փիշ-
կայի վրա գնում են նոր մեքե-
նաներ և նրանց միջոցով նավթ են արդյունահանում: Թե ինչ-
նաներ և նրանց միջոցով նավթ են արդյունահանում, կը պատմենք հետո:
պես են հորեր փորում ու նավթ ստանում, կը պատմենք հետո:

Շատ անգամ պետք է լինում շատ խորը ծակել, հորատել,
շատ փող և ուժ ծախսել: Բայց ստացված նավթն այդ ծախսերը
կարճ ժամանակում ծածկում է:



Նավթը, ինչպես նաև ածուխը, ամենակարևոր հանածոներիցն են: Մեր որերում, հզոր տեխնիկայի համար նավթը հարկավոր է վոչ պակաս, քան հացը՝ մարդուն:

4. ՆԱՎԹՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ Ե ՏԵԽՆԻԿԱՅԻՆ

Նավթն անվանում են սև վոսկի, սակայն նավթի համար դա այնքան էլ հարմար անուն չէ: Այդ համեմատությունն արել են կապիտալիստները, վորոնց համար աշխարհում ամենակարևորը վոսկին և վոսկեգրամն է: Իրականում նավթը վոսկուց անհամեմատ ավելի արժեքավոր է:

Ինչի համար է վոսկին: Դրամ կտրելու: Կոմունիզմի ժամանակ դրամ լինելու չէ: Զարգարանք: Դա յերկրորդական բան է: Լենինն ասել է, վոր կոմունիզմի ժամանակ վոսկին հասարակական արտադրոցներ չլինելու պետք կգա: Սրանով Լենինն ուզում է ասել, վոր կոմունիզմի ժամանակ վոսկին այլևս չի ունենա այն նշանակությունը, ինչ նշանակություն ունի այժմ վոսկին կունենա այն նշանակությունը, ինչ նշանակություն ունեն սովորական արժեքավոր մետաղները: Նրանից կպատրաստեն արվեստական ատամներ և զանազան գործիքներ:

Նավթն ամեն ժամանակ էլ պետք կլինի մարդկությանը: Շատ դեպքում նրանից է կախված տեխնիկայի, կուլտուրայի աճը: Անցյալում, Կովկասի քաղաքների շուկաներում հաճախ կարելի էր հանդիպել լիքը տակառների մոտ կանգնած կազակների, վորոնք աղաղակում էին:

— Անվի յուղ, անվի յուղ: Ո՞ւմ պետք է: Կազակների տակառներում նավթ էր: Կազակները նավթը ծախում էին՝ վորպես անվի յուղ:

Շատ տարիներ անցան: Տեխնիկան արագ զարգանում էր: Նա նավթին սպասարկման կանչեց: Տեխնիկան նավթի մեջ նոր ու նոր հատկություններ գտավ, նոր ու նոր հարստություններ հայտաբերեց: Դժվար է հաշվել այն բոլոր նյութերը, վորոնք այժմ ստացվում են նավթից:

Նավթը լավ և շահավետ վառելիք է: Այնտեղ, ուր պետք է վառել 7 տոնն քարածուխ, կարելի է բավարարվել 4 տոնն նավթով:

Բայց հում, անմշակ նավթը վառել ձեռնառու չէ: Ավելի լավ է նախապես նավթը վերամշակել և նրանից ստացված տարբեր նյութերը ջուկ-ջուկ գործածել:

Յուղոտ, սև նավթից ստանում են մաքուր, անգույն, ցընդող բենզին, կանաչագույն քարյուղ (կերոսին), զանազան յուղեր:

Նավթից պատրաստում են վազելին և պարաֆին, սապոն և աֆալտ, ներկեր և պայթուցիկ նյութեր, դեղորայք և անուշահոտ ջրեր, ռետին և կաշի, պահածոյի յուղ և այլ նյութեր:

Այժմ ինքներդ դատեցե՛ք: Միթե նավթը կարելի է համեմատել վոսկու հետ: Միթե դա նավթի համար վիրավորական չէ:

5. ՆԱՎԹԱՅՈՐ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ

Ինչպես են նավթից բենզին, քարյուղ, յուղեր թորում:

Նավթը, ինչպես տեսաք, զանազան հեղուկների միացումն է:

Այդ հեղուկներն սկսում են յեռ գալ ջերմության տարբեր աստիճաններով: Մարդիկ ոգտվեցին սրանից: Նրանք կառուցեցին նավթաթոր գործարաններ: Այդ գործարաններում հատուկ ապարատների միջոցով նավթը տարբեր աստիճանի ջերմության են յենթարկում:

Ամենից առաջ յեռ է գալիս բենզինը: Յեռալով, նա գոլորշի է դառնում, անջատվում է նավթից:

Մարդիկ հավաքում են գոլորշին և սառեցնում: Իսկ դուք գիտեք, վոր յերբ գոլորշին սառում է, վերածվում է հեղուկի:

Բենզինի գոլորշիներն էլ, անջատվելով հում նավթից, պաղելով, բենզին են դառնում:

Նավթը, վորից անջատված է բենզինը, շարունակում են տաքացնել: Անջատվում են քարյուղի գոլորշիները, իսկ ավելի բարձր ջերմության տակ սկսում են անջատվել զանազան յուղերի գոլորշիները: Սառեցնելով այդ գոլորշիները, ստանում են քարյուղ և զանազան յուղեր: Սա կոչվում է նավթի թուում, իսկ գործարանը՝ նավթաթոր գործարան:

Յերբ նավթից անջատված են բենզինն ու քարյուղը, մնում է թանձր ու սև նյութ՝ մազութ: Մազութը գործածում են գործարանային կաթսաները տաքացնելու, շոգեկառքերի և գետերի շոգենավերի համար:

Յերբ մազութից անջատեն նրա մեջ յեղած քսելու յուղերը, ապա կմնա ավելի թանձր ձյութ, վորը կոչվում է գուդրոն: Գործարանների և շոգեկառքերի համար գուդրոնը պիտանի չէ, վորովհետև վառվող նյութեր շատ քիչ է պարունակում:

1. ԶԵՉՆԻԱՅԻ ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՀԱՐԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Նալթը մեծ ուժ և իշխանություն է տալիս նրան, ում պատկանում է:

Հենց այս պատճառով ել կապիտալիստները շատ ազահ են դեպի նալթը և այդ պատճառով ել նրանց գործակալներն ամբողջ աշխարհում «սև վոսկի» յեն վորոնում:

Կատաղի պայքար կա կապիտալիստական նալթային տրեեստներին:

— «Ռոյալ Շեյլ Դեաշ» և «Ստանդարտ Ոյլ»-ը կատաղի պայքար են մղում իրար դեմ: Առաջին տրեստի գլխավորն է՝ սեր Հենրի Դեաերդինգը, իսկ յերկրորդի գլխավորը՝ միստեր Զոն Ռոկֆելլերը: Այդ պայքարը տարվում է վողջ կապիտալիստական աշխարհում—յերկրագնդի հինգ վեցերորդ մասում:

Բայց կա մի յերկիր՝ աշխարհի մեկ վեցերորդ մասը կազմող Խորհրդային Միությունը, վորի նալթային հողամասերը սեր Դեաերդինգի և միստեր Ռոկֆելլերի համար մատչելի չեն:

Մեզ մոտ, Խորհրդային Միության մեջ շատ տեղերում նալթ կա, նալթ կա և՛ հյուսիսում և՛ հարավում: Հսկայական տարածություններ, ուր գիտնականները յենթադրում են, թե նալթ կա և նա գեոևս անձեռնմխելի յե մնացել:

Մեր ամենամեծ նալթահանքերը գտնվում են Բազվի ռայոնում՝ Կասպից լճի ափին և Գրոգնու ռայոնում՝ լեռնային ինքնավար մարզում—Զեչնիայում:

Զեչնիան հեքյաթային բնական հարստությունների յերկիր է: Զեչնիայում արդյունահանում են հազվագյուտ մետաղներ, շինարարական քար, արծաթ, կապար: Զեչնիայի անտառները տալիս են թանգարժեք փայտ—կաղնի, հաճարենի: Բայց Զեչնիայի գլխավոր հարստությունը՝ նալթն է: Գրոգնու նալթահանքերն ու նալթարդյունահանությունը հայտնի յեն ամբողջ աշխարհում:

Անցյալ դարի սկզբում ռուսական ցարը նվաճեց Կովկասը և դարձրեց Ռուսաստանի գաղութ: Լեռնցի անկախ ժողովուրդները, նրանց թվում նաև Զեչնիան, ստրկացան: Զեչնիայի հարստությունների վրա գիշատիչ թռչունների յերամի նման թափվեցին ռուս կապիտալիստները:

Հավորակ հողերը խլվեցին չեչեններից և տրվեցին կազակներին: Զեչեններին քշեցին լեռները, ուր հողերը քարքարոտ եյին և հողագործությունն ու ընդհանրապես կուլտուրան զարգանալ չեյին կարող:

Կապիտալիստները կողոպտում եյին Զեչնիան, գրավում նրա բնական հարստությունները: Զեչենները զուրկ եյին հողից, գրագիտությունից, բժշկական ոգնությունից:

19-րդ դարի վերջում կապիտալիստներն ուշադրություն դարձրին Զեչնիայի նալթի վրա: 1893 թվին, այնտեղ, ուր այժմ տարածվում են Գրոգնու նալթահանքերը, կառուցվեց առաջին վիշկան և սկսեցին աշխատել հորատ մեքենաները:

Զեչնիայի նալթը լավ վորակի յեր: Այդ նալթը սիրով գնում եյին բոլոր յերկրներում: Նալթարդյունահանումն արագ աճում եր: Ոտորերկրյա արդյունաբերողները նույնպես շտապեցին Զեչնիա՝ նալթ արդյունահանելու:

Ռուս, բելգիացի, անգլիացի և այլ բուրժուաներից հետ չեյին մնում նաև հարուստ չեչենները: Նրանք Գրոգնու ռայոնում հողամասեր եյին ձեռք բերում և նալթ ստանալու համար հորեր վորում:

Բանվորական ձեռներն եժան եյին, ռուսական նահանգներից, կալվածատերերի կողմից քայքայված տասնյակ հազարավոր գյուղացիներ գալիս եյին Գրոգնի: Նրանց հապճեպ սովորեցնում եյին ու գործի դնում: Նրանց կոպեկներ եյին վճարում և ստիպում շատ աշխատել: Նրանցից հատուկ վարպետություն չեր պահանջվում, վորովհետև նալթարդյունաբերության տեխնիկան շատ ցածր աստիճանի վրա յեր գտնվում:

Նալթը հանում եյին հատուկ նալթահան յերկար դույլերով—«ժելոնկաներով»:

Աղմկում ու պտտվում է իռոշոր թմբուկը: Նրա վրա փաթաթված է յերկաթյա պարանը, իսկ պարանի ծայրին ամրացված է «ժելոնկան»:

Ժելոնկան իջնում ու բարձրանում է: Աղմկում է թմբուկը, ժելոնկան արագ տահում է ցած, իջնում նալթահորը, լեցվում յուղոտ սև նալթով: Ժելոնկայի ցածի մասում փական կա, յերբ նա լցվում է նալթով, նալթաքաշ բանվորը լծակը

պատեցնում ե ու փականը նավթի ծանրության տակ փակվում ե: Փելոնկան սահում ե դեպի վեր ու լեցնում տակառները: Նավթի մի մասը թափվում ե գետին ու բարակ շիթերով հոսում հեռուները:

Նավթ արդյունահանելու այս յեղանակն արդեն ճանաչված ե վորպես անպետք ե վոչ ձեռնառու, վորովհետե նավթի մի մասն իզուր փչանում ե և, բացի այդ, նավթը դուրս հանելու ժամանակ ցնդում ե նավթային արժեքավոր գազը: Այս յեղանակը նավթ արդյունահանելու անմիտ, գիշատիչ յեղանակ ե:

Բայց դա կապիտալիստին չէր անհանգստացնում: Նա մի հոգս ուներ—վորքան կարելի յե բանվորների ձեռքով շատ նավթ ըստանալ, շուտ ծախել և մեծ շահ ստանալ:

Արտադրության նոր ձևը մեքենայական ե և պահանջում ե ծախսումներ անել՝ մեքենաներ գնելու և բանվորներին սովորեցնելու համար: Կապիտալիստներն արտադրության վրա շատ փող ծախսելու ցանկություն չունեին: Հենց այս պատճառով, մինչև հեղափոխությունը մեր նավթահանքերում տարածված եր նավթ ստանալու այդ ձևը:

Հեղափոխությունը վերջ տվեց նավթի գիշատիչ արդյունահանությանը: Հեղափոխությամբ՝ նավթի վիշկաների տերը դարձավ բանվոր դասակարգը:

2. ՆԱՎԹԻ ՀՈՏ Ե ԳԱԼԻՍ

Գրոգնիում դեպի Չեչնիայի կապույտ յերկինքն ե ձգվում նավթի վիշկաների անտառը: Մարդկանցից, ծառերից ու քարերից նավթի հոտ ե փչում:

Մինչև հեղափոխությունը վիշկաները պատկանում եին Նոբելին, Չերմոյեվին և այլ միլիոնատերերին:

Միլիոնատերերը նավթահանքերում չէին ապրում: Նրանք ապրում եին քաղաքներում գեղեցիկ ու փառահեղ տներում: Նրանք ամառանոցներ ունեին Ղրիմում ու Նիցցայում:

Այնտեղ ծովի ալիքները խաղում, վողողում եին տերրասի աստիճանները, սարերի ձյունապատ գագաթները սալտակին եին տալիս կապույտ հորիզոնում:

Յերբ պարոն Նոբելը, ավտո նստած, գնում եր նավթահանքերը և մեծ բավարարությամբ նավթի հոտով ծծված ողն եր ներշնչում, ասում եր.

— Նավթի հոտ ե բուրում:

Նավթը կերակրում եր Նոբելին: Նավթը նրան մեծաքանակ փող, հրաշալի տներ և տասնյակ հազարավոր մարդկանց վրա իշխանություն եր տվել:

Գրոգնու նավթահանքերի մշակման առաջին տասնամյակում դեռ ևս ավտոմոբիլներ քիչ կային և բենզին քիչ եր պահանջվում: Մեծ պատիվ եր վայելում նավթը: Բնակարանները լուսավորվում եյին քարյուղով: Ելեկտրականությունը գործածվում եր միայն մեծ քաղաքներում:

Մեծ քանակությամբ մագութ եյին վառում: Նրանից եյին ջերմություն ստանում գետերի շոգենավերը, գործարանային կաթսաները, շոգեկառքերը: Մի խոսքով, այն, ինչ արտադրում եին նավթաքաղ բանվորները, միշտ ել գնորդներ ունեյին:

Պարոն Նոբելը մեծ գումարներ եր զրպտել գնում: Վիշկաների շուրջը կառուցվում եին նավթաթոր գործարաններ: Գործարանային բարձր ծխնելույզներից յեղող թանձր ծուխը պատում եր յերկինքը: Յուզոտ մուրը նստում եր բանվորների տների և խղճուկ պարտեզների բուսականության վրա:

Մուրը նավթահոտ եր, նավթաքաղ բանվորների կերած հացը նավթի հոտ եր տալիս:

Նավթաքաղներն ու գործարանային բանվորներն իրենց տաժանակիր աշխատանքի համար կոպեկներ եյին ստանում: Յերբեմն խոռվություններ եյին ծագում, յերբեմն գործադուլ եյին անում: Բայց տերերի կողմն եյին՝ վոստիկանությունը, որենքները, վոհմակ կազմող ցարական գեներալները, ժանդարմները, տերտերները:

Գլխավոր «ապստամբներին» բանտ եյին նստեցնում, իսկ գործադուլ անողներին գործից զրկում, փողոց եյին շարտում:

— Դուր չի՞ գալիս նավթահանքը, կորավի՛ր այստեղից:

Սոված մարդիկ շատ կային: Կալվածատերերի կողմից քայքայված գյուղացիները թողնում եյին իրենց խղճուկ տնտեսությունները, գալիս քաղաք և գործ փնտռում: Կարիքի մեջ խեղճացած եյին նրանք, քաղաքային կարգերին ել անձանոթ: Գործարանատերերը շատ սիրով վտարած գործադուլավորների փոխարեն նրանց եյին ընդունում:

Թշվառությունն ու հարստահարությունը սև մրի հետ միասին շրջում եր Գրոգնի քաղաքի և նավթի վիշկաների վրա: Սպառնալի յեր այդ հուսահատությունը: Սպառնալի և ահարկու յեր Գրոգնու քաղաքի տասնյակ հազարավոր բանվորների գայրույթը:

Համաշխարհային պատերազմը նավթարդյունաբերողներին համար շահավետ ձեռնարկութիւնն էր:

1914 թվի ոգոստոսի 1-ին սկսվեց արյունահեղ կռիվ կապիտալիստական պետութիւնների միջև: Մեզիկան, Փրանսիան, Ռուսաստանը կռվում էին Գերմանիայի, Ավստրո-Վենգրիայի, Տաճկաստանի դեմ:

Պատերազմին խառնվեցին փոքր պետութիւններն ևս՝ Իտալիան, Բուլղարիան, Սերբիան և ուրիշները:

Ռուս, գերմանացի, ֆրանսիացի, ավստրիացի և բոլոր այլ ազգութիւնների աշխատավորներին կռիվ պետք չէր: Պատերազմը նրանց, բացի սաստկացող կարիքից ու կսկիծից, վոչինչ բերել չէր կարող:

Պատերազմը պետք էր կապիտալիստներին: Ամեն մի յերկրի բուրժուազիան ձգտում էր տիրանալ ուրիշ պետութիւնների յերկրամասերին:

Ռուսաստանը իշարս այլ ձգտումների, ուզում էր Տաճկաստանից խլել, գրավել Դարդանեւի նեղուցը, փորը Սև ծովը միացնում է Միջերկրական ծովի հետ:

Դարդանեւը նավթարդյունաբերողներին պետք էր՝ Սև և Միջերկրական ծովով, առանց մաքս վճարելու, Ռուսաստանից նավթ տանելու և այլ յերկրներում վաճառելու համար:

Դարդանեւը պետք էր արդյոք նավթ արտադրող բանվորներին, իհարկե, վոչ: Շատերը նրանցից Դարդանեւի մասին չէին ել լսել: չգիտեին ինչ է դա և ուր է գտնվում:

Պատերազմի ժամանակ, ինչպես այլ, նույնպես և նավթարդյունահանող բանվորների վիճակն ավելի վատթարացավ: Հացը և այլ մթերքներն ավելի թանկացան: Ռեժիմը (կարգերը) վիշկաների շուրջն ավելի խստացավ: Վոչ մի բոլակ աշխատանքից կտրվել չէր կարելի, այլապես, իսկույն և յեթ կտուգանվէին:

Վիշկաների և գործարանների տերերն ավելի ու ավելի հարստանում էին պատերազմի շնորհիվ: Հարյուրավոր նոր գործարաններ պատրաստում էին հրետանի, արկ, տանկեր, սավառնակներ, հածանավեր, թռչնավոր գազեր: Այդ բոլորը պատրաստելու և գործադրելու համար շատ վառելիք, քարյուղ ու բենզին էր հարկավոր:

Պատերազմի պատճառով աշխատանքը վիշկաներում ծանրացավ: Տերերի գործակատարներն ուր ու գիշեր ստիպում էին բանվորներին աշխատել և ասում էին.

— Նավթ քաշիր: Պատերազմը չի սպասի:

Նավթաքաշերը նավթ էին արտադրում: Ուղղմական գործարանները վառելիք էին ստանում: Վիշկաների տերերը միլիոններ էին իրենց գրպանը դնում: Բանվորներին ու գյուղացիներին քշում էին ուղղադաշտ, կոտորում էին թնդանոթներով, գնդացիներով: Թռչնավոր գազերով կուրացնում ու թռչնավորում էին նրանց:

Տասնյակ միլիոններ էին շահում կապիտալիստները:

Տասնյակ միլիոն աշխատավորներ սպանվում ու հաշմանդամ էին դառնում խրամատներում:

Սարսափելի յեղան համաշխարհային պատերազմի հետևանքները:

4. «ՅԵԼԻՐ ՊԱՅԲԱՐԻ»

Պատերազմը շարունակվում էր: Որ ուրիշ ուր լուրեր էին ստացվում հազարավոր սպանվածների ու վիրավորների մասին, ուսական բանակների պարտութիւնների մասին:

Ցարական միլիտարները, գեներալներն ու կապալառուները կողոպտում էին բանակը: Զինվորներին ուղարկում էին ուղղադաշտ առանց փամփուշտների և հագնելիքի:

Գյուղերից բոլոր աշխատավորներին ուղղաճակատ էին ուղարկում, մնացել էին ծերերը, կանայք, յերեխաներն ու հիվանդոտ տղամարդիկ: Նրանք իրենց ուժերով տնտեսութիւն վարել չէին կարողանում: տնտեսութիւնը քայքայվում էր, նրանք էլ ավելի աղքատանում էին:

Քաղաքներում հացը չէր բավարարում: Ամեն ինչ թանկանում էր: Սոֆն էր մոտենում:

Վիշկաներում հուզումնալի խոսակցութիւններ էին շրջում:

— Քո կարծիքն ինչ է: Պատերազմը նրանց սիրած բանն է: Եւ մեր ախպեր բանվորներն ու գյուղացիներն են տուժում, թնդանոթի բաժին դառնում: Տերերի հոգան էլ չի: Նրանք խաղաղ ժամանակվա հետ համեմատած կրկնակի շահ են ստանում: Տանկերը պիտի գործեն, ուղղմական սավառնակները թռչեն, իսկ դրա համար բենզին է հարկավոր: Գործարաններն աշխատում են լրիվ ծանրաբեռնումով: Աշխարհի կեսը պատերազմում է, ամենքին էլ նավթ է հարկավոր: Քեֆ են քաշում Նոբելները: Նրանք իհարկե պատերազմի կողմնակից կլինեն: Նրանք պատե-

բազմը կշարունակեն այնքան ժամանակ, վորքան վոր մենք նրանց թույլ տանք:

Բողոքները բանվորներին բացատրում էին, թե ինչ են ցանկանում կապիտալիստները և թե բանվոր դասակարգը ինչ պետք է անի իր շահերը պաշտպանելու համար:

Բանվորներն ուշադիր լսում էին բողոքիկ ազդիտություններին: Սկսվեցին գործադուլներ: Զինվորները ռազմաճակատից փախչում էին, դասալիք էին դառնում:

Դասալիքներին բռնում էին և զնդակահարում: Բայց զինվորները շարունակում էին փախչել ռազմաճակատից:

— Հնց և խաղաղություն, — պահանջում էին աշխատավորները:

— Կորչի պատերազմը:

— Բավական է, վորքան կոտորվեցինք:

— Բավական է, — վորքան բուրժուաները լցրին իրենց գրպանները:

— Կորչի արյունարբու ցարը:

Ցարական դահլ տատանվեց...

1917 թվի մարտի 12-ին (հին տոմարով փետրվարի 27-ին) Նիկոլայ II-ին գահընկեց արին: Իշխանությունն անցավ ժամանակավոր կառավարության ձեռքը:

Այս առթիվ Գրոգնու բանվորները չքերթ-մանիֆեստացիա կազմակերպեցին:

Փողոցները տոնական կերպարանք էին ստացել: Բանվորական խմբերն ու Գրոգնու կայազորի զորայուններն ամեն կողմից շարժվում էին դեպի Գրոգնու կենտրոնը: Կարմիր դրոշակներ էին ծածանվում ամեն կողմ: Յերաժշտական խմբերը «մարսելյեզ» յերգն էին նվագում:

Փողոցներում վոչ մի «ֆարաոն»*) չեր յերեվում: Նրանք բոլորն էլ թագնվել էին:

«Հրաժարվենք, ընկերներ, հին որենքներից,

Թափ տանք նրա փողին մեր փոսներից...»

Յերգում էին մարդիկ, յերգում էին յերաժշտական գործիքները, յերգում եր վառ արեգակը ու փայլում քաղաքի վրա:

Ծիծաղկոտ էին բանվորների ու զինվորների դեմքերը: Զինվորներ շատ կային Գրոգնիում, նրանց պահում էին այդտեղ «անկարգություններն» ու գործադուլները ճնշելու համար:

*) Կատիկաններին ծաղրող մականուն:

Գրոգնիումն էին XV՝ պահեստի III դուռը, 252-րդ Սամարական շուկայի, 21-րդ դուռը:

Զինվորներն ուրախ-զվարթ խոսում, կատակում էին:

— Հը, ախպեր ջան, շուտով տուն ենք գնալու յե՛:

— Հա, Նիկոլին քեցին: Կույին ել վերջ է լինելու:

Բայց բանվորների ու զինվորների հույսերը շուտ չարդարացան:

Թագավորն էլ չկար, բայց պատերազմը շարունակվում եր: Ինչպես առաջ, այժմ էլ իշխանությունը բուրժուաների, կալվածատերերի, իշխանների ձեռքին եր:

Առաջվա նման բանվորները նավթ էին քաշում կապիտալիստների համար. առաջվա նման բանվորական ընտանիքները քաղցած էին:

Աշխատավոր մարդու հոգսերը չթեթեվացան:

Բանվորներն ավելի ու ավելի պարզ տեսնում էին, վոր այդպես շարունակել չի կարելի, վոր կապիտալիստներին պետք է քել, իրենց ձեռքն առնել վիշկաներն, ածխահորերը, գործարաններն ու ֆաբրիկները, վողջ հողը:

Սրա մասին բանվորների ու զինվորների հետ խոսում էին բողոքիկները:

Բանվորական և զինվորական պատգամավորների խորհրդում նրանք գլխավոր դերն էին խաղում: Խորհուրդը կազմվեց փետրվարյան հեղափոխությունից հետո:

Վիշկաների և զորանոցների տանջված մարդիկ ազահուլթյամբ լսում էին բողոքիկներին: Նրանք հասկանում էին, վոր Լենինի կուսակցությունն ուղիղ ճանապարհ է ցույց տալիս:

«Ժելոնկաների» մոտ, զորանոցներում և ռազմահրապարակներում բարձրախոս բողոքներ էին լսվում ժամանակավոր կառավարության դեմ:

Տերսկիյ մարզի (վորի մեջ մտնում եր Գրոգնին ու վողջ Չեչնիան) բուրժուական կառավարիչները մեծ վախով ալանջալուր էին լինում այդ խոսակցություններին, ճառերին և պատրաստվում էին:

5. Վ Ի Ե Ժ

1917 թվի ոգոստոսին, Տերսկիյ մարզի կառավարության զուլա կանգնած Կարաուլովը՝ Վլադիկավկաս (այժմ Որջնիկիձե) քաղաքում ռազմական խորհրդակցություններ կատարեց:

866253



Սեղանին փռած եր Տերակիյ մարզի մեծ քարտեզը՝ Քարտեզի վրա շատ և փոքրիկ գրոշներ եյին խփած։

Ձեկուցողը, պճնված գնդապետը բացատրում եր՝

— Դրոշակներով նշված են այն քաղաքներն ու գյուղերը, վորտեղ բոլշևիկյան վարակիչ հիվանդությունն ավելի շատ է տարածված։ Բոլշևիկյան ամենամիտանգավոր ոջախը դա...

— Դրոզնին է, միաձայն բացականչեցին գեներալները։

— Դրոզնին նշանակված է քարտեզի վրա ամենախոշոր դրոշակով. դա իզուր արված չէ։ Դրոզնու խորհրդի ղեկավարությունը բոլշևիկյան ձեռքումն է գտնվում։ Նրանք իրենց կողմն են հակել վողջ կայագորը։ Զինվորներն սպանելին չեն լենթարկվում և բացարձակ հայտարարում են, վոր կովի չեն գնա։ Բանվորները մտնում են «ապահովության շոկատները» մեջ։ Նրանք զինված են և մարտական մեծ ուժ են ներկայացնում։ Նրանք հեղաշրջում են պատրաստում։ Զորանոցներում և զործարաններում բոլորը Լենինի մասին են խոսում։

Ռազմական խորհրդակցությունը վորոշեց.

— Սրտակարգ միջոցներ ձեռք առնել։

Վաղ արշավունին հակահեղափոխական զորքը մարտական պատրաստությամբ շարժվեց դեպի Դրոզնին։

Ռգստուտի 17-ին յեսաուլ Մեդյաննիկի շոկատը գրավեց Դրոզնու խորհրդի շենքը։ Մինչև ատամները զինված զինվորները դռներն եյին պահպանում։ Գործադիր կոմիտեյի անդամները գնդակահարության սպառնալիքի տակ, ստիպված եյին խորհրդի շենքից դուրս գալ։

Սրանով Կարաուլովը Դրոզնու պրոլետարիատի դեմ արշավանք սկսեց։

Դրոզնում հակահեղափոխական վաշտերն եյին վխտում։ Նրանք բանվորների բնակարաններն եյին խուզարկում, գրավում եյին գեները և ձերբակալում եյին նրանց՝ վորոնց մոտ գեներ եյին գտնում։

Նավթահանքերի գրասենյակների պատերից կախված եյին գործից արձակված բանվորների ցուցակները։ Սրձակում եյին բոլշևիկյան և բոլշևիկյան համակրելու մեջ կասկածվողներին։

Բոլոր վիշկաների մոտ զինվորական պահակներ եյին դրված։ «Ժեկոնականները» ծուլ ու գանդաղ եյին նավթ քաշում։ Նավթաքաշներն աշխատելու տրամադրություն չունեյին։ Նրանք մտածում եյին իրենց ընկերների՝ բանտ ուղարկվածների և գործից հանվածների մասին։

Բայց ինչ կարելի չեր անել, յերբ հրացանների փողերն ուղղված եյին դեպի բանվորները, և լավագույն ղեկավարներն ու կազմակերպիչները բանտումն եյին նստած։

Միևնույն ժամանակ արշավանք սկսվեց Դրոզնու «վտանգավոր» կայագորի դեմ։

21-րդ պահեստի գնդին հրաման տրվեց՝ մեկնել ուղիմաձակաւ։

Զինվորները հրաժարվեցին հրամանը կատարել։ Այն ժամանակ Կարաուլովի զորքը զիշերով շրջապատեց զորանոցներն ու զինաթափ արեց գունդը։

Նույնպես վարվեցին Դրոզնու մյուս հեղափոխական զորամասերի հետ։

«Բոլշևիկյան վողին» զորանոցներից դուրս արվեց։ Այնտեղ բուն դրին հակահեղափոխական վաշտերը։

Սեպտեմբերի սկզբին Դրոզնի մտավ «վայրի դիվիզիան».

«Վայրի»-ների բրգոտ փափախների տակից փայլում եյին չար, սև աչքերը...

Դրոզնու արվարձանների բնակիչները մայթերի վրայից մույլ դիտում եյին «հաղթական» յերթը։

Յեվ շշուկով, շարքից շարք անցնում եր՝

— Ձեչեններ են...

6. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԿՐՈՒՆԿՆԵՐԻ ՏԱԿ

Անցյալում չեչեններն ատում եյին «գյավուր»՝ ուռններին. չե վոր ուռնները բուն ուժով Ձեչնիային իրենց եյին յենթարկել, ժողովրդին դարձրել եյին չքավոր ու իրավագուրկ. Կովկասը գրավելու ժամանակ ուռն գեներալները թնդանոթներով այրեցին ու ավերեցին չեչենների աուլների (գյուղերի) կեսը։ Ձեչենների լավորակ հոգերը ավեցին կազակներին։

Չքավոր չեչենների և կազակների միջև շատ տասնամյակներ արյունահեղ ազգամիջյան կռիվներ եյին տեղի ունենում, վորոնք հրահրվում եյին ցարական կառավարության կողմից։ «Ապստամբությունները խաղաղացնելու» անվան տակ կազակների ատամաններն ու յեսաուլներն ամբողջ չեչենական գյուղեր արի եյին անցկացնում։

*) «Գյավուր» ասում են մուսուլմանները զրիստոնյաներին. գյավուր՝ բուռացի սղանալու և անհավատ։

Բայց աստիճանաբար, Չեչնիայում այլ, դասակարգային թշնամութիւնն հասունացավ:

Չեչեն ժողովուրդը տեսնում էր, վոր բոլոր «գլավուրները» վատ չեն, վոր նրանցից մեծ մասը ճնշված է ու աղքատ կյանք է վարում: Չեչեն ժողովուրդը տեսնում էր, վոր հարուստ չեչենները ցարական ճնշման դեպքում եւ շատ լավ ապրում են: Գրոզնու նավթարդյունաբերողների մեջ ամենահարուստներից մեկը չեչեն Չերմոյեվն էր:

Չերմոյեվի եւ այլ հարուստների միջոցներով ղինվում էր «վայրի դիվիզիան», կազմակերպվում էին չեչեն հակահեղափոխական ջոկատներ:

Իսկ Չեչնիայի չքավորները հեղափոխութեան, բոլշևիկների կողմնակիցներ էին:

Դոնն ու Կովկասը քաղաքացիական կռիւների գլխավոր շրջաններն էին:

Բուրժուական-կալվածատիրական ավազակախումբը փորձում էր այստեղ իր տիրապետութիւնը հաստատել:

Այդ շրջանի մասին ականատեսները հետեւյալ կերպ են պատմում.

«Ամբողջ Տերսկիյ մարզում հունվարի սկիզբներին սարսափելի դրութիւն էր ստեղծվել: Սունժենյան գիծը համատարած ուղղաճակատ էր. ստանիցները (կազակների գյուղերը) եւ առւնները փոխադարձաբար կողոպտում, սպանում, այրում էին: Վլադիկովկասն ու Գրոզնին նույն դրութեանն էին: Թնդանութային, ուբաձիգ եւ գնդացիային կրակը ամեն ուր էր տեղի ունենում:

Նավթը հեշտութեամբ բռնկվում է: Այդ որերին, յերբ փողոցներում գնդակներն էին սուլում եւ ոսկեքեր էին պայթում ամենուր, քանիցս անգամ հրդեհ ընկավ Գրոզնու նավթահանքերում: Հանգցնում էին մի շատրվանը, մյուսն էր բռնկվում:

Սպիտակ բանակայինները չկարողացան պրոլետարական ուժեղ Կարմիր բանակի առաջխաղացումը կանգնեցնել: Սպիտակ զենեւաւորներն ոգնութեան կանչեցին արտասահմանի կապիտալիստներին:

Նրանք արդեն սրտադող հետեւում էին Ռուսաստանի քաղաքական անցուղարձին:

Բուրժուաները վախենում էին՝ «վայ թե մեր բանվորները ռուսներից որինակ առնեն»:

Յեւ կապիտալիստները փորձեցին մեկ հարվածով յերկու նսպաստակ սպանել. առաջինը՝ խեղդել հեղափոխութիւնը եւ

յերկրորդը՝ իրենց ձեռքը գցել մեր յերկրի բնական հարստութիւնները:

Իրար հետեւից կապիտալիստներն իրենց զորքերն ուղարկում էին Ռուսաստան՝ բոլշևիկների դեմ կռիւու համար:

Դոնում փայլեցին զերմանական զինվորների գլխաւորները: Բազմում եւ Գրոզնում — նավթային հարստութեան վայրում անգլիացիները բուն զին:

Դա շատ ծանր ժամանակ էր Գրոզնու համար:

Բանվորները սեղմված անգլիական եւ սպիտակ բանակայինների յերկաթյա բռունցքներում՝ ստիպված յեղան լուռ հպատակվել:

Յերկու հազար բանվորական ընտանիքներն ստիպված յեղան կարմիր զորամասերի հետ հեռանալ Գրոզնուց:

Ամեն մի հեղափոխական աշխատանք, ամեն մի հեղափոխական խոսք խիստ պատժվում էր: Քաղաքի ծայրամասերում խուզարկութիւններն ու ձերբակալութիւնները շարունակվում էին:

Մութ գիշերներին, յերբեմն այս, յերբեմն այն տանը անաղմուկ մոտենում էր յունկերների փակ ավտոմոբիլը: Յունկերները մտնում էին տուն եւ քիչ հետո ձերբակալվածին առած դուրս էին գալիս:

Դիշեր ու ցերեկ աշխատում էր ոսկազը (սպիտակների լրտեսական կազմակերպութիւնը): Չերբակալվածներից շատերն անհետ կորան: Նրանց չարչարում էին ոսկազում, տանում եւ սպանում էին քաղաքից դուրս գտնվող զերեզմանոցում:

Բոլշևիկները թագնակեցին եւ ընդհատակյա աշխատանք էին տանում:

Նրանք կապվեցին Դոնի, Կուբանի, Վլադիկովկասի բոլշևիկյան ընդհատակյա կազմակերպութիւնների հետ: Նրանք բանվորական ջոկատներ էին կազմում ու ղինում. պրոպագանդ էին տանում սպիտակ բանակների զինվորների միջեւ եւ համոզում էին կարմիրների կողմն անցնել:

Կյանքի եւ մահի կռիւ էր: Պայքարը իշխանութեան, ճնշվածների ապրելու եւ կառուցելու իրավունքի, նավթի, արտադրութեան նոր, սոցիալիստական կազմակերպութեան համար էր:

Պրոլետարիատը հաղթանակեց: Քաղաքներում եւ գյուղերում փերձնականապես խորհրդային իշխանութիւն հաստատվեց: Նավթի վիշկաները, նավթի շատրվանները, նավթաթորման գործարանները եւ յերկրի վողջ անտեսութիւնն աշխատավորների սեփականութիւն դարձավ:

Բայց այդ բոլորն ինչ դրությամբ անցավ բանվորների ձեռքը:


Ջարդված մեքենաներ, քանդված վիշկաներ, փչացած մեխանիզմներ:

Սպիտակ գվարդիականները քայքայում էին ամեն ինչ: Գրոզնուց նահանջելիս՝ նրանք այրեցին նավթահանքերը:

Գրոզնու նավթահանքերը 100 ուր վառվում էին: Կրակե շատրվանները յերկինքն էին բարձրանում և իրենց բոցերով լուսավորում վիշկաների ավերակները, նավթի շուռ տված ցիստերնաները, աղքատությունն ու քայքայումը, վորոնք սպիտակներից էին մնացած:

Գրոզնին այսպիսի դրությունից դուրս յեկավ խորհուրդների որով ու նոր կյանք սկսեց:

Նավթի պատմության մեջ նոր դարեշրջան սկսվեց:



1. ՅԵՐԿՈՒ ՌՈՒՄԲ

Նավթի հնգամյակ: Սա մի ուումը էր՝ թշնամու բանակը գցած:

Կարող եք հավատացած լինել, վոր Դետերդինգն ու Ռոկֆելլերը բերանացի սովորեցին այն բոլորը, ինչ կա մեր նավթի 1-ին հնգամյակի մեջ:

Իմացան և չհավատացին,

— Ձի կարող պատահե՛ր: Հինգ տարվա մեջ չի կարելի անել այն՝ ինչ բուշեվիկները մտադիր են անել:

Ամերիկական թերթերը գոռոզությամբ գրում էին.

— Բուշեվիկներն իրենց անտեսական պլանները 5 տարի առաջ են կազմում: Ինչ հանգստություն: Մորհուրդները կարող են այլևս յերկու տարի դիմանալ, վոչ ավելի: Բայց յեթե վողջ աշխարհը նրանցից յերես դարձնի, նրանք յերեք ամիս անգամ չեն դիմանա:

Առաջին հնգամյակից ընդամենը ութ տարի առաջ մեր նավթարդյունահանությունը բոլորովին քայքայված էր: Նավթարդյունահանությունը նախկին տեղերից մենք այդպիսի դրությամբ ստացանք:

Մահրաթեշտ էր ամեն ինչ վերականգնել, ավերված վիշկաների տեղ պետք էր նորը շինել, նորոգել մեքենաները, հողով ծածկված նավթահանքերը նորից բաց անել:

Պետք էր նավթ ունեցող նոր հողամասեր գտնել. կապիտալիստները պլաններ ու գծանկարներ չէին թողել: Այս բոլորը վերականգնելու համար պահանջվում էր տասնյակ հազարավոր մարդկանց լարված և համառ աշխատանք:

Յերկիրը ծանր դրության մեջ էր: Պատերազմը վոչնչացրեց ցանքը և ավերեց գործարանները: Նույնիսկ հաց չէր բավականանում բանվորներին կերակրելու համար: Արտասահ-

մանի կապիտալիստները մեզ վոշինչ չեյին ուզում ծախել. նրանք բոլշեվիկներին դեմ բլոկ կազմակերպեցին:

1921 թվականին ել Մերձվոլգյան շրջանում անբերրիություն առաջ յեկավ: Սովը տասնյակ հազարավոր սոված գյուղացիներին բռնեց դեպե Դոնը, Տերեկը, հացառատ Կուբանը: Սովյալներին պետք եր կերակրել, բնակարան ու աշխատանք տալ: Խորհրդային իշխանությունը ամբողջ ուժերը լարեց այդ խոշոր դժվարությունը հաղթահարելու համար: Պրոլետարիատը, գրկանքներից չվախենալով, առանց տատանումների գնում եր իր կուսակցության հետեւից:

Գրոգնու բանվորները քուսպ եյին ուտում հացի փոխարեն, հիվանդանում եյին ընդացավով, ախիֆով: Բայց իրար հետեւից վերանորոգում եյին վիշկաները, գործել եյին սկսում մեքենաները, մշակվում նավթահանքերը:

Իսկ թշնամին խորհուրդների յերկիրը ողակած՝ սպասումներ:

— Յերբ բոլշեվիկները վերջնականապես քայքայված, աղքատացած և հնազանդ՝ պիտի գան իմ վոդորմածությունը խնդրելու:

Սեր Հենրի Դետերդինգը նախկին տերերից մեծ քանակությամբ ակցիաներ (բաժնետոմսեր) գնեց: Այդ ակցիաները ուսական նավթային ձեռնարկությունների ակցիաներ եյին: Սեր Դետերդինգը հետեւյալ հաշիվն եր անում.

— Խորհրդային իշխանությունը յերկար չի դիմանա: Շուտով հին կարգերը կվերահաստատվեն և յես Կովկասյան սովթահանքերի լիակատար տերը կլինեմ:

Պետք ե ճիշտը խոստովանել. Սեր Դետերդինգը արեց այն բոլորը, ինչ կարող եր՝ հին կարգերը վերահաստատելու համար:

Վրաստանում Սեր Դետերդինգի փողերով մենշեվիկները պրոլետարական իշխանության դեմ տպառամբություն կազմակերպեցին. բայց Վրաստանի աշխատավորները նրանց չըպաշտպանեցին:

Դետերդինգը դրամական ոժանդակություն եր ցույց տալիս «արդյունաբերական կուսակցությանը», վոր նա խանդարմունք մտցնի մեր աշխատանքներում: Վնասարարները ջանք եյին թափում նրանց համար և մեզանից թաղցնում եյին նավթատու հողամասերը, դանդաղեցնում եյին աշխատանքը, փչացնում եյին մեքենաները, նավթ վորմնում եյին այնտեղ, ուր նավթ չեր կարող լինել և այդ նպատակով տասնյակ, հարյուր հազարներ եյին վատնում:

Վնասարարական գործերը բացվեցին: ԽՍՀՄ-ն պատերազմի քաշելու բոլոր փորձերն ապարդյուն անցան, իսկ պատե-

լազմը նրանց պետք եր այն հույսով, վոր Ծավթահանքերի իրենց ձեռքը գցեն:

Դետերդինգն ու Ռոկֆելլերը շատ անգամ փորձեցին մեր նավթարդյունաբերության կոնցեսիան (մեր յերկրում նավթ արդյունահանելու իրավունքի գնումն) վերցնել: Մենք հրաժարվեցինք. մենք կարող ենք ինքներս նավթ մշակել և նավթը մեզ շատ անհրաժեշտ ե:

Դետերդինգն ու Ռոկֆելլերը, ուզենան թե չուզենան, բայց ստիպված են մեր նավթը գնել. իսկ մեր նավթը լավ վորակի յե, աժան և բոլոր յերկրներն ել գնում են:

Նավթի գիշատիչները շատ են ուզում մեր նավթի տերը դառնալ, չարանում են ու ասում.

— Յերբ այս պատմությանը վերջ կլինի: Յերբ պիտի վոշնչանան խորհուրդները:

Բուրժուական քաղաքագետներն ու մարգարե «գիտնականները» հանգստացնում են իրենց տերերին, թե՛

— Շուտով... շուտով... ճշգրիտ հաշվված ե, վոր յերկու յերեք ամսից բոլշեվիկներին վերջ ե լինելու:

Բայց 1931 թվի մարտին պայթեց յերկրորդ դոմբը:

— Գրոգնու և Բազվի հարվածայինները նավթի հնգամյալն իրագործեցին յերկու և կես տարվա մեջ:

1913 թվին ցարական Ռուսաստանում արդյունահանել եյին 9 միլիոն 300 հազար տոնն նավթ. ԽՍՀՄ-ում 1931 թվին արտադրված ե 22,1 միլիոն տոնն նավթ:

Ընդամենը 2 և կես տարվա ընթացքում Խորհրդային Միությունն անցավ վենեցուելայից, վորը նավթ արդյունահանող ամենատառջավոր յերկրներից մեկն ե, Կանյոնենք նաև Միացիալ Նահանգներից:

Հարվածայնորեն, սոցիալիստական ձեւով ենք մենք կառուցում մեր նավթարդյունահանությունը: Բարձրանում ե մեր նավթարդյունահանության թեք գիծը. կապիտալիստական յերկրների, Դետերդինգի և Ռոկֆելլերի նավթային տնտեսությունն ընկնում ե, նրա կոր գիծը գնում ե դեպի ցած:

2. ԼԵՌԱԳԻՐԸ

Անցնելով գետերից, դաշտերից, ձորերից, լեռներից, կարժիր մայրաքաղաք՝ Մոսկվայից մինչև Գրոգնին—լեռնային Չեչնիան ձգված և հեռագրաթելը՝ Անշուկ ցնցումներով, ան-

շահափելի յերերուաներով, հեռագրաթերի միջով Սոսկվայից Գրոզնի հասավ հեռագիրը:

«Վողջուհուհու եմ Ադնելթի և Գրոզնելթի բանվորներին, վարչական-տեխնիկական աշխատակիցներին՝ նավթի հնգամյակը յերկու և կես տարում իրագործելու առթիվ: Շնորհավորում եմ հաղթանակը: Կեցցե՛ ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգը, վորը խորտակեց կապիտալիզմի շղթաներն ու յերկրի տերը դարձավ: Կեցցե՛ խորհրդային իշխանությունը: Կեցցե՛ բոլշևիկների կուսակցությունը»:

Ի. Սալին

Հեռագիրն ուղարկել եր լենինյան կուսակցության ղեկավարը, կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի գլխավոր քարտուղարը:

Հեռագիրն ստացան Գրոզնու և Բագվի նավթային բանվորները:

Նավթի հնգամյա պլանի իրագործումը 2 և կես տարում բոլոր յերկրների հեղափոխական աշխատավորության համար մեծ տոն եր:

Մասաի սև հանքերում, ծխապատ Եսսենում, մշուշապատ Յուեյսում*) Հարավային Ամերիկայի նավթահանքերում, ուր տաժանակիր աշխատանքն է տիրում, բանվորները ղեկավարի հեռագիրն եյին կարդում և շնորհավորական նամակներ գրում իրենց հեռավոր ընկերներին՝ Գրոզնու և Բագվի բանվորներին:

Այնտեղ, խորհրդային սահմաններից դուրս, ձգնաժամ, գործադրկություն, հուսահատություն է տիրում:

ձգնաժամ: Ի՞նչ բան է դա:

Լրիվ ընթացքով աշխատում եյին կապիտալիստական գործարանները: Ամենանոր, կատարելագործված մեքենաները պատրաստում եյին բազմատեսակ ապրանքներ՝ կտորեղեն և մետաղե շինվածքներ, սապոն և կոմբայն, ամաններ և ավտոմոբիլներ: Անդադար գիշեր ու ցերեկ նավթ եյին ստանում, ածխի շերտերն եյին ջարդում ածխահանքերում: Դաշտերից ու պլանտացիաներից մեքենաների ու գյուղատնտեսական գիտությունների ոգնությամբ հավաքում եյին հացահատիկի, բամբակի, սուրճի բերքը:

Գործարաններն անհատ կամ խումբ կապիտալիստների սեփականություն են: Նրանցից ամեն մեկը ձգտում է շատ

*) Մասսը Բելգիայի տժխային ռայոն է, Յուեյսը Անգլիայի ածխային ռայոն է, իսկ Եսսենը քաղաք է, ուր կան խոշոր մետաղաձուլական գործարաններ:

ապրանք պատրաստել, շատ ծախել և շատ վաճառակել: Իհարկե, այդ ապրանքները նրանք անձամբ չեն պատրաստում, այլ պատրաստում են բանվորների ձեռքով, վորոնց ամեն կերպ կողոպտում ու խաբում են:

Յեվ ահա սկսվում է այնպիսի ժամանակ, յերբ ապրանք գնող չի լինում: Սա չի նշանակում, վոր կապիտալիստական յերկրների բնակիչներն ամեն ինչ ունեն և սրա համար գնելու կարիք չեն զգում: Վոչ. միլիոնավոր մարդիկ գուրկ են ամենաանհրաժեշտ բաներից՝ շորեղենից, վառելիքից և նույնիսկ, հացից: Դրանք աշխատավորներն են: Բանվորների մեծագույն մասն իրենց աշխատանքի համար այնքան է ստանում, վոր հազիվ կարողանում է գլուխ պահել:

Գործազուրկների դրությունն ավելի ծանր է: Նրանք միայն կարող են նայել խանութների փայլուն ցուցափեղկերին, վորտեղ լիք ուտելիք ու հագնելիք կա և իրենց ընտանիքների հետ միասին սովից մեռնել: Վայրենի դրություն է ստեղծվում. խանութները լիքն են ամեն տեսակ ապրանքներով, իսկ շրջապատում քաղցած են:

Շատ ապրանք չկուտակելու, նրանց գները չիջեցնելու համար կապիտալիստները փակում են գործարանները կամ կրճատ աշխատանքային շաբաթով են աշխատեցնում:

Գործազրկությունն արտասահմանում որեց-որ աճում է: Միայն Ամերիկայում այժմ 12 միլիոն գործազուրկ կա: Նավթի արտադրությունն Ամերիկայում վերջին տարվա ընթացքում պակասել է 20 տոկոսով:

Հարյուր հազար նավթային բանվորներ փողոց են շարտված և սովամահության են դատապարտված:

Ահա այս բոլորը կոչվում է տնտեսական ձգնաժամ:

ձգնաժամով տատապում են բոլոր յերկրները, բացի Խորհրդային Միությունից:

Մեզ մոտ տնտեսական շինարարության ծաղկուն շրջան է: Տարեց-տարի բարելավվում է աշխատավորների դրությունը:

Մեզանում գործազրկություն բոլորովին չկա: Դեռ ավելին, նավթահանքերում շատ անգամ բանվորական ձեռքեր չեն բավարարում:

Այդ ի՞նչից է: Ի՞նչն է հնարավորություն սվել խորհրդային նավթային բանվորներին մեծ հաղթանակ տանել և նավթային հնգամյակն իրագործել յերկու և կես տարում:

Յեկեք պարզենք պատճառները:

3. ԼԻՆԳ ՊԱՏՃԱՆՈՒ

Մինչև հեղափոխութիւնը վիշկաներն անհատ տերերի ձեռքումն էյին գտնվում: Թվում եր նույնիսկ, թե ամեն մի վիշկան մի տեր ունի:

Ամեն մեկն աշխատում եր շատ նավթ հանել, բանվորներին շատ կողոպտել և նավթարդյունահանութեան վրա քիչ ծախս անել:

Նախկին տերերը չէյին ցանկանում ծախս անել և նոր մեքենաներ ձեռք բերել: Նավթը հին ձևով էյին հանում. դրա պատճառով մեծ քանակութեամբ նավթ եր կորչում:

Այժմ Գրոզնում հին տերերը չկան. կա մի մեծ տեր միայն՝ պետական տրեստ՝ «Գրոզնեֆթը»: Նրան են պատկանում Գրոզնու բոլոր վիշկաները, նավթարդյունահանութեան գործարանները: Սա սուպրին պատնաւն է:

Տեր—խորհրդային իշխանութիւնը և տեր—կապիտալիստն ալլապեղ բաներ են: Խորհրդային տերը կողոպուտի չի դիմում հարստանալու համար, այլ ուզումն անտեսութիւնը խելացի և խնայողաբար առաջ տանել: Նավթի դիշատիչ կողոպուտի փոխարեն, տարվում է նավթարդյունահանութեան պլանային զարգացում:

Պլանն նշանակում է ամեն ինչ նախապէս հաշիւել ու վորոշել: Այսքան նոր հորեր բաց անել. այսինչ թվականին, այսքան վիշկաներ ու գործարաններ կառուցել. դրա համար պետք են այսչափ մեքենաներ, այս կամ այն թվով բանվորներ, այսքան շինանյութ և այլն:

Նոր տերը, ժխտութիւն չանելով, նավթի գործի մեջ նոր տեխնիկա յե մտցնում: Նա դիտե, վոր թանգնոց մեքենաներն իրենց ծախսը կհասնեն: Նրանք շատ նավթ են հանում, և այդ նավթն իր վորակով ավելի լավ կլինի, քան վատ մեքենաներով հանվածը:

Նախկին տերերը նավթի մի շերտ գտնելով, այլեւ ուրիշը չէյին վորոնում. նրանք մի տեղ նստած ծծում ու քամում էյին իրենց նավթահորը: Նոր տերը հեռուն է նայում. յեթե շերտը սպառվի, այն ժամանակ ի՞նչ անել. յերկիրն առանց բենզինի կմնա, առանց քարյուղի, առանց մագուլթի: Անհրաժեշտ է, վոր նավթի հանումն ու մշակումն անընդհատ ընթանան:

Յեւ ահա Չեչնիայի և Ուրալի լեռներում, Սիբիրոյան թերակղզու վրա ու Բազի մոտ ծովի հատակում հետազոտական աշխատանքներ են կատարվում: Հարվածային բան-

վորներն ու ինժեներները նավթի նոր հանքեր են վորոնում: Վորոնում են ու գտնում:

Արտադրութեան պլանային զարգացումը մեր հաջողութիւնների յերկրորդ պատնաւն է:

Յերրորդ պատնաւը՝ նոր տեխնիկան է:

Նրա մասին մանրամասն կխոսենք յերրորդ գլխում:

Չորրորդ պատնաւն այն է, վոր խորհրդային իշխանութիւնը հնարավորութիւն է ստեղծել նավթն ու նրա հարստութիւնները խելացի կերպով և աշխատավոր մարդկութեան համար ամենաշատ ոգուտով ոգտագործել:

Անցյալում ի՞նչ էյին անում նավթը Ռուսաստանում: Նրանից քարյուղ էյին ստանում լամպի համար և մագուլթ՝ վառելու համար:

Իսկ այժմ մեր կառուցած հսկա գործարանների համար մեծաքանակ նավթ է հարկավոր: Այդ գործարաններն ամեն տեսակ բան պատրաստում են. նրանք պատրաստում են մեքենաներ, գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ, ներկեր, կտորեղեն, կոշիկ: Մենք ավտոմոբիլներ ենք շինում, վորոնց բենզին է հարկավոր, մեր խորհրդային և կոլեկտիվ անտեսութիւնների դաշտերում գործող տասնյակ հազարավոր տրակտորները նավթային վիշկաներից վառելիք են պահանջում:

Յեւ, վերջապէս, հինգերորդ պատնաւն այն է, վոր մեր բանվորներն այլ կերպ են աշխատում, քան կապիտալիստական գործարաններում:


Մեր յերկրում աշխատանքը գիտակցական է, սոցիալիստական. նա հանդիսանում է «պատվի, փառքի, հերոսութեան գործ»: Խորհրդային նավթային բանվորն զգում է իրեն, վորպէս վիշկաների, գործարանների տեր:

Նորելի, Չերմոյեվի ժամանակ աշխատանքը տաժանակիր եր: Աշխատում էյին ստիպած, աշխատում էյին գեթ մի փոքր վատակի՝ սովից չմեռնելու համար:

Այժմ Գրոզնու վիշկաներում խոսակցութիւնները դառնում են հարվածայնութեան, մրցման, գյուտարարութեան, ուցիտնալիզացիայի շուրջը:

Թող Դեսերդինգն ու Ռոկֆելլերը իրենց բանվորների մեջ փորձեն հարվածայնութիւն ու մրցում կազմակերպել: Վոչինչ էլ չի ստացվի: Վոչ վոք հարվածային չի գրվի, վոչ վոք չի մրցի: Ո՞վ ցանկութիւն կունենա իր ուժերը լարել Ռոկֆելլերի հարստութիւններն ավելացնելու համար:

Աշխատանքը կապիտալիստական աշխարհում հանդիսանում է վորպես ծանր անհրաժեշտություն, վորպես տաժանակիր գործ: Մեքսիկայում, որինակ, նավթային վիշկաների վրա աշխատում են աքսորյալները: Հնդկաստանի մի մասում, ուր նավթահանքեր կան, յեվրոպացիք սկամորթ ստրուկների աշխատանքն են գործադրում:



Գրոգնու. Յոր գործարան-խոհանոցը:

Ինչպես են աշխատում նրանք, վորոնց հետևում մտրակը ձեռքին կանգնած է հսկիչը: Իհարկե վոչ մի աշխատանքային վոգեվորություն նրանք չեն ունենա: Նրանք ատում են իրենց աշխատանքն ու իրենց շահագործողներին:

Նրանք մի բան հաստատ գիտեն. նրանք գիտեն, վոր ինչպիսի լարվածությունը ել աշխատեն, միևնույն է, իրենց կյանքը չեն բարելավի:


Մեղանում, խորհրդային Միության մեջ այլ պատկեր է:

Գործարանների ու կոլտնտեսությունների զարգացման հետ միասին բարելավվում է աշխատավորների զրույթյունը:

Ով Գրոգնին տեսել է հեղափոխությունից առաջ՝ այժմ չի ճանաչի:

Խղճուկ տնակների փոխարեն այժմ ամեն կողմ նոր տներ են շինված՝ բարձր ու լուսավոր, ելեկտրական լուսավորությամբ, շոգեփառարաններով, լոգնոցներով:

Կառուցվում են դպրոցներ ու հիվանդանոցներ, ակումբներ ու գործարան-խոհանոցներ:



Գրոգնու Յոր հիվանդանոցը: Շինարարությունը մատել է մոտ 2 միլիոն:

Գրոգնեցիք այդ բոլորը տեսնում են և դրա համար լավ ու հարվածային աշխատում են:

Ճիշտ է, պետությունը նավթի մի մասը ծախում է արտասահմանում, բայց դա անհրաժեշտ է նոր գործարաններ կառուցելու, յերկաթուղագծեր անցկացնելու, նոր շխտեր շինելու: Հենց նույն նավթարդյունահանություն համար նոր ու կատարելագործված մեքենաներ են հարկավոր: Այդ մեքենաների մի մասը մենք գնում ենք արտասահմանում, վորի փոխարեն մենք պետք է ծախենք մեր արդյունաբերության արտադրանքների մի մասը, ի միջի այլոց և նավթը:

Նավթի արտածման դիմաց մենք արտասահմանից բերում ենք ալիպիսի մեքենաներ, վորոնք իրենք մեքենաներ ու սարքոցներ են պատրաստում, և մենք կազատվենք արտասահմանից կախում ունենալուց:

4. ՆԱՎԹԸ ՅԵՐԿՐՈՐԴ ՇՆԳԱՅԱԿՈՒՄ

Մեր նավթարդյունաբերության առաջ ավելի մեծ խնդիրներ կանգնած են յերկրորդ հնգամյակում:

1932 թվին մենք արդյունահանել ենք 26,4 միլիոն տոննա նավթ, իսկ 1937 թվին մենք պիտի ստանանք 78 միլիոն տոննա, այսինքն՝ զրեթե 3 անգամ ավելի:


Սրա համար պետք է վերափոխել և կատարելագործել նավթարդյունաբերության տեխնիկան: Չե՞ վոր միայն բարձր տեխնիկայի դեպքում հնարավոր է բարձրացնել նավթարդյունահանությունը:

Նավթահանքերի բոլոր մեխանիզմները պետք է սկսեն ելեկտրականությամբ աշխատել: Նավթի արդյունահանության և վերամշակման բոլոր աշխատանքները պիտի մեքենայացվեն:

Վոդ Նավթը պիտի վերամշակվի ու դառնա վառելիք, յուղ և այլ արժեքավոր նյութ: Յերկրորդ հնգամյակը շատ նյութեր է պահանջում, պետք են մեկուսացնող նյութեր ելեկտրաարդյունաբերության համար, ասֆալտի հատուկ տեսակներ՝ նոր ճանապարհների համար, արհեստական կաուչուկ՝ ունզինի արդյունաբերության համար. այս բոլորը նավթից են ստացվելու:

Սրա համար մենք շատ նոր ու հուժկու կրեկինգներ ենք աշխատեցնելու, նավթաթորման նոր գործարաններ ենք կառուցելու:

Այն նավթահանքերը, վորոնք այժմ մշակվում են, մեզ չեն բավարարելու: Մեր հսկայաքանակ տրակտորներն, ավտոները, սավառնակները մեծ քանակությամբ վառելիք են կուլ տալու: Պետք է նավթի նոր շերտեր գտնել, նոր հորեր փորել: Յերկրորդ հնգամյակի համար պետք են հետախուզների մարտական ջոկատներ: Գիտնական յերկրաբանները ցույց կտան, թե Հյուսիսային Կովկասի լեռներում, Ուրալում, Սախալինում, Մերձվոլգյան շրջանում և այլն, վորտեղ նավթ կա: Յեվ հորատող մեքենաները կխրվեն մինչև այժմ մարդու ձեռքը չգիպած հողերին, ուր նավթի մեծարժեք պահեստներ կան թաղնված: Այդ պահեստների նավթը՝ յերկրի թանձր ու սև արյունը խողովակների, ցիստերների միջով պիտի հոսի դեպի մեր գործարաններն ու մեքենաները:



Նավթաքորման գործարանում, նավթը տափացնող ապարատներ

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ
Տ Ե Ն Ն Ի Կ Ա Ն
ՎՃՈՌՄ Ե ԱՄԵՆ ԻՆՉ

1. ԴՈՒՐԻՑ ԴԵՊՈՒ ՏՈՒՐԲԻՆԱՅԻՆ ՀՈՐԱՏՈՒՄ

Նավթարդյունահանությունն սկսվում է հորատումով: Պետք է հոր փորել:

Նավթ պարունակող հողամասում խոր հոր են փորում, այնքան են փորում, մինչև հասնեն նավթի շերտին:

Անցյալում հորը փորում էին դուրի ոգնություն: Վոչ բարդ հարմարություն միջոցով, բահաձև դուրը գետնի միկնույն տեղին այնքան եր հարվածում, մինչև կարծր մասերը փխրվում էին: Հորատելու այս ձևը կոչվում էր հարվածային:

Դուրի մոտ անպայման մի քանի բանվորներ էին լինում. դուրի ամեն մի հարվածից հետո նրանք պտտեցնում էին յերկաթյա շտանգը, վորին դուրն եր ամրադրած լինում: Դա դժոխային աշխատանք էր:

Դուրը 1 րոպեյի մեջ 50 հարված եր անում, այդքան անգամ ել պետք եր շտանգը պտտեցնել: Իզուր չէ, վոր նավթային ծերունի բանվորներն ասում են՝

—Ով հարվածային հորատում չի արել, նա յերջանիկ ե: Դուրը դանդաղ եր աշխատում: Ամեն մի նավթահոր փորելու համար պետք եր մեկուկես—յերկու տարի աշխատել: Այժմ վոչ Գրոյնիյում և վոչ ել Բագվում դուր հարվածային հորատման չեք հանդիպի:

Դուր այժմ ել կա, բայց դուր նրան չեք տեսի: Նա միացրած ե յերկար շտանգի՝ մետաղային խողովակի հետ, վորի մեջը դատարկ ե: Դուրն այլևս չի հարվածում, այլ պտուտակաձև փորում ե:

Դուրը պտտվում ե: Նա պտտվում ե ելեկտրական մոտորի ուժով: Դուրը, պտուտակաձև դառնալով, փորում ե իր շուրջը և հորն արագ խորացնում: Սա պսուսակաձեղ հորատում ե կոչվում:

Հարվածային հորատման դեպքում քարի և այլ նյութերի մանրուցքը հորումն է մնում: Միանալով ջրի հետ նա կազմում է փափուկ ցեխ*): Այդ ցեխը խանգարում է հորատմանը և պետք է լինում հեռացնել այն. մանրակրկիտ, անշնորհակալ աշխատանք է դա:

Պտուտակաձև հորատման դեպքում այլ պատկեր է: Ցեխն ինքն է հորից դուրս գալիս խողովակի միջով, վորն ամրացրած է դուրին:

Պտուտակաձև հորատումը մի քանի անգամով արագացրեց աշխատանքը: Այժմ յերկու-յերեք ամիսը բավական է հոր պատրաստելու համար:

Բայց պտուտակաձև հորատումը լավի հետ վատ կողմեր ել ունի: Պտուտակաձև հորատման ամենամեծ թերությունը կայանում է նրանում, վոր պտուտակաձև հորատման միջոցով փորած հորը շատ անգամ ուղիղ չի լինում:

Վոչ ուղիղ փորված հորերը ձեռնառու չեն. նրանք փչացնում են հորատման խողովակները, շատ նյութ և եներգիա յեն պահանջում: Բացի դրանից, վոչ ուղիղ հորերը շփոթմունքի մեջ են գցում աշխատողներին. նրանք մտածում են այսինչ հաստուկթյան շերտ բաց անել, բայց հանդիպում են բոլորովին այլ ուժեղուկթյան շերտի:

Շատ վաղուց գիտնականները խորհում են, թե ի՞նչ կաքելի յե անել, վոր նավթահորերն ուղիղ լինեն:

Այս ասպարիզում ամենալավ գյուտն արեց խորհրդային ինժեներ Կապելյուշնիկովը: Նա սուրբինային հորատման ձևը հնարեց: Տուրբինային հորատման ձևն ինչո՞վ է տարբերվում պտուտակաձև հորատումից:

Պտուտակաձև հորատման դեպքում պտուտվում է վոչ միայն դուրը, այլ և պտտվում են խողովակները: Տուրբինային հորատման դեպքում միայն դուրն է պտտվում, իսկ խողովակներն անշարժ են մնում:

Տուրբինային հորատման համար այնպիսի բարդ և թանկ-նոց մեքենաներ, վորպիսիք գործածվում են պտուտակաձև հորատման դեպքում՝ հարկավոր չեն: Ուրեմն սուրբինային հորատումն եժան է նստում, և պետությունը շատ դրամ ծախսելու անհրաժեշտությունը չի ունենում:

Բայց գլխավորն այն է, վոր սուրբինային հորատման դեպքում միշտ ել ուղիղ հորեր են ստացվում:

2. ԿՈՒՎ ՇԱՏՐՎԱՆՆԵՐԻՆ

Գեղեցիկ է նավթային շատրվանը: Հուժկու շիթերով նավթը դեպի վեր է խփում, շրջապատը նավթոտում է, ձորակներում ու փոսերում նավթի լճակներ են կազմվում:

Շատրվանը՝ մեծ վնաս է: Դեռևս ավելին՝ շատրվանը դժբախտություն է:

Մտածեցեք, իզուր տեղ վորքան նավթ է կորչում: Իսկյեթե նա բռնկի՝ Կվաուկեն նավթով ծծված հողը, անտառը, ավանը, Նավթահանքերում հաճախակի յեն հրդեհներ պատահում: Պատճառը շատրվաններն են:

Մենք պայքարում ենք անսանձ տարերքի դեմ և աստիճանաբար հաղթահարում նրան:

Այժմ վիշկաների վրա հատուկ մեքենաներ են դրվում, վորոնց ոգնությունը ուզած ժամանակ կարելի յե հորը փակել:

Ահա հորը հասավ մինչև նավթի շերտը. լավում է ազատվող նավթի ստորերկրյա աղմուկը: Մի ակնթարթում նավթի շատրվանն աղմուկով դուրս է ժայթքում:

Բայց բանվորները հանգիստ են: Բանվորի ձեռքը մեքենայի ղեկի վրա յե: Մի քանի պտույտ, և նավթահորը փակ է, նավթը շղթայված: Նա այժմ մարդու իշխանություն տակն է. մարդիկ կաշխատեն խելացի և խնայողաբար գործածել նավթը և այդ հարստությունը գուր տեղ չծախսել:

3 ՈՒՐ Ե ՆԱՎԹԸ

Ցերը մարդ առաջին անգամ նավթահանքերն է գալիս, ահամա հարց է տալիս.

— Ո՞ւր է նավթը:

Ժելոնկայի դարն անցել է: Այն ժամանակ նավթը յերևում եր: Նավթահորի շուրջը նավթի լճակներ եյին լինում: Վտաները սայթաքում եյին մազուկի ցեխի մեջ:

Նավթն այժմ փակ է: Նավթահորից նավթը հանում են խողովակներով, վորտեղից նա լեցվում է հսկա նավթամանների

*) Հորերում միշտ ջուր է լինում. չոր գետինը գծված է փոքիլ: Ցեխն հորում ջուր չի լինում, ապա արվեստական կերպով լեցնում են:

մեջ: Ամեն ինչ խուլ կերպով փակած է: Սա կոչվում է հեռան-
սիզագիա:

Կար ժամանակ, յերբ նավթը լցնում էին ուղղակի գետ-
նի մեջ փորած հասարակ փոսերում: Նավթը փորքան քեֆն ու-
զում եր, կարող եր շողիանալ ու ցնդել: Ցնդում եր նավթի
ամենաարժեքավոր մասը՝ բենզինը:

Այժմ նավթն արեգակի լույս չի տեսնում: Վոչ մի կա-
թիլ բենզին չի կորչում: Ահա թե ինչ են ցույց տալիս թվերը:
Նախկին տերերի ժամանակ Գրոզնիում նավթը տալիս եր
կես տոկոս բենզին, իսկ այժմ տալիս է 18—20 տոկոս:

Տարեց-տարի մենք բարելավում ենք նավթի արդյունա-
հանութունը:

Խորհրդային իշխանության առաջին որերից Գրոզնիյում
ասում էին.

— Կորչեն ժելոնկաները: Նրանցով տնտեսութուն վարե՛լ
կլինի... պետք է նավթահան խողովակներ դնել այնպես, ինչ-
պես արտասանմանում:

Յեւ ահա ամեն մի նավթահոր իր մոտորն ու խողովակ-
ներն ունեցավ: Բայց սա յեւ քիչ եր Գրոզնու նոր տերերին—
նավթային բանվորներին:

Ամեն մի հորին մի մոտոր: Միթե այդ ձևով կարելի չե
տնտեսել: Ինչքան փող և ելեկտրոններ գիա յե գուր կորչում:

Այժմ մեկ ելեկտրոմոտորն սպասարկում է մինչև 20 նավ-
թահորեր: Մոտորը տեղավորված է հատուկ շենքում, նավթա-
հորերի կենտրոնում: Մոտորից դեպի նավթահան խողովակներն
են ձգված յերկաթյա յերկար շտանգներ: Նրանց ոգնությամբ
նավթահան խողովակները գործի յեն դրվում:

Այսպես նոր տերերը—բանվորները բարելավում են նավ-
թային տնտեսութունը: Նրանք հասան նույնիսկ այն բանին,
վոր մի տոնն նավթի արդյունահանումն այժմ յերկու անգամ
ավելի աժան է նստում, քան խորհրդայնացումից առաջ եր:

Նավթի հերմետիզացիայի շնորհիվ մենք վորակով շատ ա-
վելի լավ նավթ ենք ստանում, քան նախկին տերերը—կապի-
տալիստները: Նավթի գազն առաջ ամբողջապես ցնդում եր,
իսկ այժմ մենք գազը բռնում ենք և սեղմման միջոցով նրա-
նից գազոյին ենք ստանում: Գազոյինը բենզինի նման է, բայց
ավելի թեթև և մաքուր: Գազոյինը շատ բարձր է գնահատվում,
նա գործածվում է սավառնակների մոտորների համար:

Գազի մնացորդները նույնպես ոգտագործվում են. այդ
մնացորդներով տաքացնում են գազային շարժիչները:

4. ԿՐԵԿԻՆԳՆԵՐ

Գրոզնիյում կա կրեկինգի մի հայտնի ապարատ, վորը
իր կառուցող ամերիկական ընկերության անունով կոչվում է
«Վինկլեր—Կոխ»: «Վինկլեր—Կոխ»-ի ապարատներում վերա-
մշակվում են նավթի մնացորդները, վորոնք բենզին են տալիս:
Նման ապարատներ այժմ Գրոզնիյում շատ կան: Բայց մենք
այժմ սկսել ենք մեր յերկրում կրեկինգ պատրաստել, վորոնք
ամերիկականից վոչնչով հետ չպիտի մնան:

Մեզ բենզին շատ է հարկավոր: Բայց նավթի կազմի մեջ
բենզին շատ չկա: Բազմի նավթը 5—10% բենզին է պարունա-
կում միայն: Գրոզնու նավթն ավելի հարուստ է և նրա մոտ
մեկ հինգերորդ մասը—18%—ը բենզին է:

Իս քիչ է: Տեխնիկան ավելին է պահանջում: Տեխնիկայով
զինված մարդիկ վերափոխում են նավթի թորման յեղանակ-
ները: Ամերիկայում գիտեն նավթի մեծ մասը բենզինի վերածել:

Ամերիկացիք հատուկ ապարատներում նավթը բարձր աս-
տիճանի տակ ջերմացնում են: Բարձր ջերմության տակ նավ-
թի տարրերը բաժանվում են և բենզինի գազ բաց թողնում:
Նույնիսկ մազութից բենզին են թորում:

Նավթաթորման այս յեղանակը ամերիկացիք կոչեցին կրե-
կինգ: Անգլերեն դա նշանակում է «ճայթյուն», «ճայթող»:
Բանը նրանումն է, վոր ջերմության բարձր աստիճանի տակ,
յերբ բենզինը թորվում է, ճայթյուններ—«կրեկինգ» է լսվում:

Մենք նույնպես կառուցել ենք մի շարք կրեկինգի գործա-
րաններ Բազվում, Գրոզնիյում, Տոլափսեյում: Այս գործարան-
ները շատ մեծ հաջողությամբ աշխատում են, նույնիսկ ավե-
լի մեծ հաջողությամբ, քան Ամերիկայում: Մի տոնն աժան
նավթից մենք ստանում ենք կես տոնն թանգարժեք բենզին:


5. ԱՐՇԱՎ ՀԱՄԱԵԻԱՐՀԱՅԻՆ ՌԵԿՈՐԴԻ ՀԱՍԱՐ

Գրոզնու 7-րդ կրեկինգ գործարանը ամերիկական գործա-
րաններից առաջ է անցել:

Ամերիկայում կրեկինգի մեքենայախումբն աշխատում է
բանվորական որվա 90 տոկոսը:

Գրոզնու 7-րդ կրեկինգ գործարանը հարվածային բան-
վորները ջանքերով աշխատում է բանվորական որվա 93,5
տոկոսը:

Սա նշանակում է, վոր մեր գործարանն աշխատանքի մեջ ավելի քիչ ընդհատումներ ունի, ավելի լավ է ծանրաբեռնված, քան Ամերիկայի կրեկինգ գործարանները:



Գրոգնու յերկրորդ կրեկինգ-գործարան:

Ամերիկայում 1000 տոնն մագուլթից ստանում են 330 տոնն բենզին: Մեզ մոտ, այդ 7-րդ գործարանում ստանում են 385 տոնն բենզին:

7-րդ կրեկինգ գործարանի հարվածայիններն ու ինժեներները նաևակ են գրել Սելմաչի, Սալինգրադի գործարանի, Մազնիսասոյի, Կուզնեցկսոյի. Դնեպրոսոյի, Խարկովի սեպկսոյին գործարանի յեվ սոցիալիսական արդյունաբերության բոլոր նորակառույցների հարվածային բանվորներին, վարչական-տեխնիկական կազմին յեվ ԽՍՀՄ-ի ժող. սնեստգերազույն խորհրդի նախագահ ընկ.-Ուղանիկիձեյին:

Այդ նամակում նրանք ասում են.

«Հաղթահարելով բոլոր դժվարությունները, տիրապետելով ամերիկական տեխնիկային, 7-րդ կրեկինգ գործարանի կոլեկտիվը 1931 թվի առաջի յեռամսյակում պլանը գերակատարեց:

Մարտի 23-ին մենք պլանը կատարեցինք 100 տոկոսով և փերամշակեցինք 117,500 տոնն մագուլթ: Մարտի 23-ից մինչև ապրիլի 1-ը պլանից դուրս մշակեցինք 12,000 տոնն մագուլթ:

«Ըստ պլանի, հում բենզինի մի տոննի ինքնարժեքը ախտի լինելը 13 ռուբլի 41 կոպեկ. մենք ինքնարժեքն իջեցրինք 12 ռուբլի 50 կոպեկի:

«Ամերիկայում 1000 տոնն մագուլթից ստանում են որական 330 տոնն բենզին, իսկ մենք ստանում ենք 380 տոնն:

«Այս բոլոր նվաճումները մենք ձեռք ենք բերել ինքնուրույն աշխատանքով, առանց արտասահմանյան մասնագետների ղեկավարություն:

«Մենք մեր առաջ խնդիր դրինք ռացիոնալիզացիայի յենթարկել արտադրությունը: Ռացիոնալիզատորական բժիշկներ ստեղծվել են բոլոր ցեխերում:

«Մենք հավաքում ենք բանվորների առաջարկները՝ արտադրությունը բարելավելու համար:

«Մենք ձեռք բերած հաջողություններով չենք բավարարվում: Մենք խնդիր ենք դրել ել ավելի խորը տիրապետել տեխնիկային, նվաճել նոր և նոր տեխնիկական բարձունքներ:

«Մեր բանվորները հատուկ դասընթացներում կրեկինգի գործն են ուսումնասիրում: Մեր գործարանի ամեն մի ինժեներ՝ շեֆ և յերկու բանվորի տեխնիկական անդրադիտությունը վերացնելու գործում: Ամեն մի ոտարեկրացի մասնագետ, հնգորյակը մի անգամ՝ բանվորների հետ զրույց և ունենում տեխնիկայի հարցերի շուրջը:

«Սա մեզ վստահություն է տալիս և համոզում, վոր մենք հետագայում հետ չենք մնա և ամերիկական ռեկորդներ կունենանք նալթարդյունաբերության մեջ:

«Համառ կամքով մենք մեծ նվաճումներ ձեռք բերինք արտասահմանյան նորագույն տեխնիկային տերապետելու մեջ:

«Մենք դիմում ենք Սելմաչի, Ստալինգրադի, Խարկովի տրակտորային գործարանների, Կուզնեցկատորյի և սոցիալիստական արդյունաբերության այլ հսկաներին և կոչ ենք անում համամիութենական արշավ կատարել համաշխարհային ռեկորդների համար:

«Առաջ դեպի նոր հաղթանակներ:

«Լիակատար տիրապետենք տեխնիկային:

«Կեցցե՛ք Լենինյան Կոմ. կուսակցության Կենտկոմը և նրա ղեկավար ընկ. Ստալինը»:

Այս նամակի տակ հարյուրավոր ստորագրություններ կան՝ Աշխատավորները համառությամբ հաղթահարում են նոր տեխնիկայի դժվարությունները: Համառությամբ ստեղծում են

նոր տեխնիկա, սոցիալիստական տեխնիկա: Չե՞ վոր ընկ. Ստա-
լինը ասել է. «մեր անտեսութեան սոցիալիստական վերակա-
ռուցման գործում տեխնիկան փճում է ամեն ինչ»:

6. ՆԱՎԹԻՆ ՃԱՆԱՊԱՐԶ

Կար ժամանակ, յերբ նավթը տեղափոխում էին առկառ-
ներով ու տկերով: Հետո սկսեցին տեղափոխել ցիստերններով:
Իսկ այժմ նավթը տեղափոխելու նոր միջոց կա. նավթը տե-
ղափոխում են հատուկ խողովակներով:

Տուափսեն փոքրիկ ու լուռ կիսաամառանոցային քա-
ղաք էր Սև ծովի Հյուսիսային Կովկասյան ափին: Սև ծովի
անունն է միայն սև. պարզ յեղանակին նա յերկնքից էլ կա-
պուտակ է:

Տուափսեյում կիպարիսներ են աճում, մազնուրիան է ծաղ-
կում: Մագնոլիայի պնակի մեծութեան ծաղիկները վանիլի և
կիտրոնի բուրմունքն ունեն:

Տուափսեյի նավահանգիստը Խորհրդային Միության լա-
վագույն նավահանգիստներից մեկն է: Բայց արդյունաբերա-
կան քաղաքներից Տուափսե ապրանք տանելը և՛ դժվար է և՛
հեռու: Յերկար տարիներ նրա նավահանգիստը խաղաղ էր ու
բանուկ չեր:

Բայց 1928 թվին նավթատար խողովակը, իր ամբողջ յեր-
կարութեամբ ձգվելով, Գրոզնուց Տուափսե հասավ:

Ի՞նչ է նավթատար խողովակը:

Նա մի ահագին խողովակ է, հսկա մետաղյա յերակ, փո-
րի միջով նավթը Գրոզնու վիշկաններից հոսում ու հասնում է
Տուափսեյի կապուտակ ծովը:

Այլևս հարկավոր չէ մեծ ծախսեր անել և նավթը յեր-
կաթուղով տեղափոխել: Նավթ տեղափոխելու համար ցիստերն-
ներ ու շոգեկառքեր հարկավոր չեն: Նրանք թող այլ բեռներ
տեղափոխեն: Տեղափոխելու շատ բեռներ ունենք մենք:

Նավթն ինքն իր փոտովն է Տուափսե գնում: Նավթատար
խողովակը 618 կիլոմետր յերկարութեան ունի: Ամեն տարի նա
Տուափսեյի նավահանգիստն է հասցնում 1 միլիոն 500 հազար
տոնն նավթ: Տուափսեյից, ծովային ճանապարհով, հատուկ
նավթատար շոգենավերով նա գնում է մեր սևծովյան նավա-
հանգիստներն ու արտասահման:

Ահա թե ինչ է նավթատար խողովակը:

Նա անտեսում է միջոցները, կրճատում է նավթի տեղա-
փոխման ծախսերը:

Ցարական Ռուսաստանում նավթատար խողովակներ չկա-
յին: Կապիտալիստները դրանց կառուցման վրա ծախսեր անել
չէին ցանկանում:

Մեր յերկրի նոր տերը, բանվոր դասակարգը, այլ կերպ է
մտածում. նա ուղիղ է դատում, ասում ու գործադրում: Լավ
է մի անգամ շատ ծախսել, քան ամեն տարի, որ-որի մեծ
ծախսումներ անել նավթի տեղափոխման վրա:

Յե՛վ ահա կառուցվել է Գրոզնի—Տուափսե նավթատար
խողովակը:

Հաստ յերակի միջով նավթը Տուափսե յե հոսում: Տու-
ափսեյի նավահանգստում կյանքն է յեռում. նավթ են
մղում, նավթ են լեցնում ու տանում Սև ծովի մեր հյուսիսա-
յին նավահանգիստներն ու արտասահմանը: Արտասահմանյան նա-
վերը, փոքրնք տառնյակներով կանգնած են լինում նավահան-
գստում, իրար հետևից նավթով են լեցվում, ծանրանում, խա-
րխիւր հանում ու խոր շունչ քաշելով, լողում դեպի հեռ՝ ար-
տասահմանյան զանազան յերկրները:

Խաղաղ ու լուռ Տուափսեն էլ չկա: Այնտեղ կառուցվել են
բենզին և այլն նավթամթերքների մշակող գործարաններ: Կի-
սակուրորտային քաղաքից, մագնոլիաների և հանգստարանների
քաղաքից, Տուափսեն վերածվեց կարևոր արդյունաբերական և
մեծ նավահանգիստ ունեցող քաղաքի:

7. ՆԱՎԹԻ ՈՒՂԻՆ ՁԳՎՈՒՄ Ե ԴԵՊԻ ԿՈՆՏՆԵՆԵՐՆԵՐԸ

Նավթատար մի խողովակը դեռ քիչ է:


Մենք Սև-ծովի դռները բաց արինք Գրոզնու նավթի հա-
մար: Բայց մեր լախաձավալ յերկրի շատ յերկրամասեր հե-
ռու յեն նավահանգիստներից:

Յերկրի բնորոշակ դաշտերում սոցիալիստական մեծ շի-
նարարութեան է կատարվում: Կառուցվել ու կառուցվում են
հսկա գործարաններ: Դյուղում չքավորն ու միշակը հիմնակա-
նում միացել են կոլտնտեսութեանների մեջ:

Համատարած զանգվածներով փռված են կոլտնտեսային
դաշտերը, տրակտորներ են աշխատում:

Տրակտորները մեր խորհրդային գործարաններում են
շինվում: Ստալինգրադի տրակտորի գործարանը, Լենինգրադի

«Գրասնըյ Պուտիլովեց»-ը, Պարկովի տրակտորային գործարանը մեծաքանակ տրակտորներ են պատրաստում: Միայն Պարկովի գործարանը տարեկան տալու յն 50 հազար տրակտոր:



Բաշխիչ բատարեյա: Այդտեղից նավթը ուղղվում էր խողովակների միջով:

տերները ճանապարհին են մնացել, ապա ցանքսի հունձքի ամենատաք ժամանակ, յերբ ամեն մի ժամը թանգ է, կոլտնտեսությունների տրակտորները պարապ կանգնում են:

Յերկաթուղով մեծ տարածություններ բենզին ու քարյուղ տեղափոխելն էլ թանգ է նստում: Այդ թանգությունն էլ նստում է կոլտնտեսությունների վրա ու բարձրացնում գյուղատնտեսական ապրանքների ինքնարժեքը:



Տրակտորներին ածախ և առնում իր տրակտորի համար բազ, անըզնհատ կերպով և աժան վառելանյութ տալու համար կառավարությունը վորոշեց՝

— Կարճացնել նավթի ճանապարհը:

— Գրոզնուց զեպի Ուկրայինա անցկացնել տասներկու գյուլմանոց խողովակ, վորի միջով նավթային նյութերը պիտի հոսեն զեպի կոլտնտեսային ուայոնները:

Նավթային արտադրանքները հոսելու յեն Գրոզնու վիշկաներից ու կրեկինգի գործարաններից սկիզբ առնող խողովակով, վորն անցնում է Արմավրից, Կրասնոսկինից, Տիխոբեցկուց և հասնում է Ռոստով: Հասնելով Դոն գետին, այդ խո-

ղովակները յերկաթյա պատյանի մեջ մտած իջնում են գետի հատակը. բենզինը խողովակով՝ ջրի տակից է անցնում:

Ռոստովից խողովակի այդ ուղին բաժանվում է յերկու մասի. մեկ ճյուղը գնում է զեպի Միլերովո, իսկ մյուսը — զեպի Նիկիտովկա՝ Ուկրայինա:

Այդ կետերում հատուկ կայաններ կան, վորոնք խողովակի միջով հոսող վառելանյութն են ծծելու և ցխտերները լեցնելու: Ցխտերները յերկաթուղուց անցով գնալու յեն դաշտերը և մանրու յեն տրակտորներին:

Մեր Կատերպիլերներն ու Զոն-Դիրերն առանց վառելանյութի չեն մնա:

Վառելիքն էլ շատ եժան է նստելու կոլտնտեսությունների վրա: Յերկու տարվա ճանապարհածախսի տնտեսումը կժածկի նավթային նյութեր տեղափոխող խողովակի կառուցման 56 միլիոն ծախսը:

Այդ խողովակի անցկացումը հայտարարվել էր գերհարվածային: Նա այժմ ավարտված է և գործում է:

Յեվ Գրոզնու նավթահանքերի ու նավթաթորման գործարանների հարվածային բանվորները ջանք են թափում ավելի արագ ու լավ աշխատել: Պետք է քարյուղ տալ, բենզին տալ հազարավոր մեքենատրակտորային կայաններին. պետք է վառելանյութ տալ տասնյակ հազարավոր կոլտնտեսային տրակտորներին:



Գրոզնի — Ուկրաինա նավթա տարը:

1. 47—0 3ԵԿ 34—0

Գրողին պատմութեան եջերում գրել է շատ փառապանծ անուններ: Շատ նավթային բանվորներ, խիզախ հեղափոխականներ, կայուն բուլշևիկներ պայքարել են բանդիտների դեմ, կռվել են Կարմիր բանակի շարքերում, պարտիզանական կռիվներ մղել Չեչնիայում, կռվել ու նահատակվել Գրողնու փողոցներում բարրիկադների վրա:

Այդ հերոսների անունները հարգանքով հիշում են Գրողնիյում, Չեչնիայում, փող թորհրդային Միութեան մեջ:

Յես այս գրքում այդ հերոսների մասին չե վոր պիտի խոսեմ: Յես խոսելու յեմ այլ հերոսների—այս որերի մարտիկների, սոցիալիստական շինարարութեան ենաուղիապտների, հրնգամյակի հերոսների մասին:

Միայն տեխնիկան չեր, վոր վճռական դեր խաղաց նավթի ճակատում մեր ունեցած հաղթանակների մեջ: Սոցիալիզմը մարդիկն են կառուցում:

Այդ մարդկանց մասին եմ պատմելու:

.....Գրողնու հին նավթահանքերում կա № 47-0 նավթահորը: Աշխատանքի սկզբում քիչ եր մնում, վոր փչանար նա: Ահա թե ինչ է պատմում բրիգադիր Կուզնեցովը զրա մասին:

—Հունվարի 27-ն եր, յերրորդ վճռական տարվա սկիզբը: Խողովակները տհաճութեամբ և դանդաղ սողում էին հորի մեջ: Այլ նավթահորերից հետ մնալ չեյինք ուզում: Յես արգելակը յուղեցի, վոր գործն արագ առաջ գնա: Բայց զգվելին դադարեց հպատակվել, և խողովակներն սկսեցին իրար հետեից ցած գլորվել: Նրանց ծանրութեանը 40 տոնն եր, Ե՛հ, մտածում էյի, կորավ նավթահորը...

Բայց հորատողները չթողին վոր հորը կորչի: Շփոթվելով, նրանք վազեցին դեպի խելագարորեն պտտվող անիվը և, մեծ ուժ գործ դնելով, կանգնեցրին խողովակների անկումը:

47-0 նավթահորի վրա 16 բանվորներ էյին աշխատում: Նրանք համերաշխ, հարվածային կռիվով էյին կազմել: 47-0 հորատողներին հին նավթահանքերում բոլորն ել հարգում էյին՝ գործին քաջ տեղյակ լինելու և դեպի աշխատանքը բուլշևիկյան մոտեցում ունենալու համար:

Նրանցից ամեն մեկը բացի հիմնական աշխատանքից կատարում եր նաև մի վորևե ողտակար գործ: Մեկը կուսակցական աշխատանքն եր ղեկավարում, յերկրորդը սոցմրցման հաշվառքն եր տանում, յերրորդը հորի թեքութեանն եր ուսումնասիրում և այլն:

47-0 նավթահորում աշխատանքը կանգ չեր առնում, մեքենաները չեյին կտրվում: Դա ձեռք եր բերվել շնորհիվ այն բանի, վոր վիշկայում հորատողներն ամենախիստ աշխատանքային կարգապահութեանն էյին ստեղծել:

Մի անգամ հորատող Կալամեյցկը հարբած եր աշխատանքի յեկել: Ընկերները նրան չթողին աշխատանքի անցնելու:

Միթե հարբեցողին կարելի յե թողնել նավթահորում աշխատել:

Աշխատանքից հետո հավաքվեցին և վորոշեցին նրան հարվածային անունից զրկել, բրիգադից դուրս անել:

Ահա թե ինչպիսի կարգապահութեանն է 47—0 նավթահորում:

Մի քանի այլ նավթահորերում անկարգութեանն է, անստեղծարութեանն: Հորի մեջ են ընկնում ու կորչում են՝ խողովակներ, դուրեր, գործիքներ: Բայց 47-0 նավթահորում, նրա գոյութեան հենց առաջին որերից, վոչ մի պտուտակ չի կորել, չի ընկել հորի մեջ: Վիշկան մաքուր է, մեքենաները լավ ղրութեան մեջ, ամեն աշխատանք իր ժամանակին, արագ ու բարեխիղճ է կատարվում:

Նրդյունքը մեծ յեղավ:

Ամերիկայում հորատող մեքենան մեկ ամսվա ընթացքում հորատում է 300 մետր: Բուլշևիկների կուսակցութեանը խորհրդային նավթահորերի բանվորներին առաջադրեց հասնել Ամերիկային և մեկ հորատող մեքենայի ամսական նորման հասցնել 300 մետրի:

47-0 նավթահորն արդեն հասել է Ամերիկային և անցել Նա ամսական տալիս է մի մեքենայի 300 մետր հորատում:

Թվում եր, թե դժվար է ավելի լավ աշխատել, քան 47-0-ում են աշխատում: Սակայն 34-0 նավթահորն ավելի լավ է աշխա-

տում: Նա կարողացավ հորատման նորման հասցնել 400 մետրի:

— Եհ...—ասում է հորատող Չերնոբրովը—յեթե մենք ամերիկական մեքենաներն ունենայինք, մեծ հաջողությունների կհասնեյինք: Չե՞ վոր մենք հասարակ սարքոցով ել հասանք ու անցանք նրանցից:

34-0 նավթահորի բանվորներն ամեն ջանք դործ են դնում իրենց սարքոցների աշխատանքն ել ավելի լավացնելու համար: Նրանք ավելացրին հորը փողոցող խողովակի ուժը, փորի հետեանքով ավելի լավ սկսեցին հորը փողոցել և դուրը յերկար ժամանակ հորում պահել ու դուրս չհանել: Դուրն ել ավելի յերկար է դիմանում, շուտ չի փչանում:

47-0 և 34-0 նավթահորերը Գրոգնու հին նավթահորերի պարծանքն են:

2. ՀԱՂՅԱՆԱԿ ՎՆԱՍԱՐԱՐՆԵՐԻ ԴԵՍ

47—0 և 34—0 նավթավահորերի հաջողությունները՝ դա Գրոգնու հարվածայինների տված լավագույն պատասխանն է ֆլասարարներին:

Ֆլասարարներն ամեն կերպ աշխատում եյին ապացուցել, վոր Գրոգնու նավթի համար շատ ջանք թափել հարկավոր չէ: Նրանք ասում եյին՝

— Գրոգնու ռայոնը հանգչող ռայոն է: Նրա նավթի պահեստներն սպառվում ու վերջանում են: Գրոգնիյում նոր նավթահորեր փորել չարժե, նավթ չկա:

Սակայն գրոգնեցիք ֆլասարարներին չհավատացին: Հետախուզական հորատումների աշխատանքը լիակատար ընթացքով առաջ է գնում: Նրանք նորանոր նավթային շերտեր են գտնում:

47—0 նավթահորի շատրվանը խիեց և որական տալիս է ավելի, քան 550 տոնն նավթ: Ֆլասարարներն «ապացուցում եյին», թե իմաստ չունի Գրոգնիյում նավթ փորոնել:

Կոմ. կուսակցության Կենտրոնական Կոմիտեն վերջեց ամեն միջոց գործ դնել և ծավալել հետախուզական հորատումը: Գրոգնին մոտակա յերեք տարիների ընթացքում պիտի տա վոչ պակաս, քան 15 միլիոն տոնն նավթ:

Այսպես անհաջողությամբ վերջացավ այն փորձը, վորով ուղում եյին խորհրդային իշխանության ուղադրությունը հեռացնել Գրոգնու նավթային հորատություններից:

Յերբ ֆլասարարների առաջին փորձը չհաջողվեց, նրանք ընտրեցին ֆլասարարություն չունեցող նոր ուղի. նրանք վորոշեցին, ինչ գնով ել լինի, դանդաղեցնել հորատումը:

Խորհրդային ինժեներ ընկ. Կապելյուշնիկովը խողովակային հորատման գյուտն արեց: Դուր արդեն գիտեք, թե դա ինչ բան է: Նա հնարավորություն է ստեղծում պտուտակաձև հորատումից, ավելի արագ հորատել:

1929 թվին Ամերիկայում նավթային արդյունաբերությունը ցուցահանդես եր: Այդ ցուցահանդեսին գնացել եր ընկ. Կապելյուշնիկովը և տարել եր իր ապարատը:

Ինչքան շատ նոր մեքենաներ կային ցուցահանդեսում: Ինչքան նոր մեքենաներ եյին հարել ամերիկացիք: Չե՞ վոր նրանք մեծ գիտնականներ ու գյուտարարներ շաա ունեն: Իրանցից մեկը, որինակ, համալսարհային անուն ունեցող Նելսոնն է, վոչ վաղուց մեռած:

Սակայն ընկ. Կապելյուշնիկովի գյուտն ամենից լավն եր:

Ամերիկական նավթարդյունաբերողները Կապելյուշնիկովին հրավիրեցին իրենց նավթահորերում իր գյուտը գործադրելու: Կապելյուշնիկովը համաձայնվեց: 1929 թ. դեկտեմբերի 11-ին նա իր փորձն արավ Տեխասում, Ժենի Լինդ Սիմինոլ ընկերության նավթահանքերում:

Մեքենան 5¹ 2 րոպեյում մի ֆուտ փորեց (ֆուտը մոտավորապես մետրի մեկ յերրորդական մասն է): Իսկույն և յեթ փորձեցին պտուտակաձև հորատող մեքենան: Մի ֆուտ փորելու համար նրան պետք յեղավ 18 րոպե:

Փորձերը քանիցս անգամ կրկնվեցին և ամեն անգամ ել խողովակային հորատումը փայլուն արդյունքներ տվեց:

Ամերիկայում այժմ մեծ սիրով խողովակային հորատումն են գործադրում: Սակայն մեզ մոտ, ԽՍՀՄ-ի մի շարք նավթահանքերում ֆլասարարները կաշվից դուրս եյին դալիս՝ խողովակային հորատումը չգործադրելու համար:

— Ընկերներ,—կանչում եյին նրանք բոլոր բանվորական ժողովներում, արտադրական խորհրդակցություններում և գիտական համագումարներում,—խողովակային հորատումը հուսատու բան չէ: Մենք այն դեռևս չենք փորձել և չենք գործադրել: Սպասեցեք, ընկերներ...

Նավթային բանվորների արհմիության նախագահության նիստն եր: Ամբիոն բարձրացավ պրոֆեսոր Ստեփանյանը:



Իմ ճեմեր
Կապելյուշնիկովը,
վորը հնարել է
տուրբոփորը

Գիտնական եր նա: Սպիտակահեր: Մտեփանյանն ասաց.

— Խողովակային հորատումը դատարկ բան է: Նա վոչ մի սնտեսուժյուն, միջոցների խնայողություն չի տա:

— Սխալ է,—տեղից լավեց մի հուզված ձայն:

Ամբիոն բարձրացավ №16—29 նավթահորի խողովակային հորատող հարվածային բանվոր ընկեր Գեյկինը:

— Յես ամեն տեղ խոսելու յեմ, վորպես խողովակային հորատման կողմնակից: Մենք փորձել ենք այն, ստուգել աշխատանքի մեջ: Մենք, քաղաքացի պրոֆեսսոր, միջոցների խնայողություն ունեցանք... մեր բրիգադը պայքարելու յե կապել-յուշնիկովի ապարատի գործադրման, հորատման՝ գերամերիկական տեմպերի համար:

— Ճիշտ է, ուղիղ է, Գեյկին,—աղաղակեցին ժողովականները:

Վնասարարների մտադրությունները պարզվեցին մինչև վերջ: Վնասարարները չկարողացան Գրոգնու հարվածայիններին քթից բռնած ման ածել: Գրոգնու նավթային բանվորների կամքով գործադրվում է խողովակային հորատման յեղանակը, վորով հասնելու է անցնելու յեն կապիտալիստական Ամերիկայից:

Հարվածայինները Գրոգնու նավթահանքերն աչալուրջ պահանջում են փաստարարներից, գիշատիչներից, մեծ ու փոքր ցեղերից: Սոցիալիստական սեփականության պաշտպանության խնդիրը, վորպես մեր հիմնական խնդիրներից մեկը, զբաղված է բանվոր դասակարգի առաջ:

Պայքար հատարական սեփականությունը գողացողների, կողոպտողների դեմ:

3. ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԸ ԼԱՎԵՐԻՑ

ԽՍՀՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի վորոշումից մի քաղվածք.

«... Նավթային արդյունաբերության հնգամյա պլանը 2½ տարում իրագործելու պայքարում հայտարարվում առանձնապես բացառիկ աշխատանքի համար «Լենինի շինարարության»-ով պազգեվասել Գրոգնեթի հարվածային բանվորներից, ինժեներական-տեխնիկական յեվ վարչական կազմից հետեվյալ ընկերներին.

1. Կապտուր Ի. Վ., 2. Գանեփին Ս. Մ., 3. Չամրով Ֆ. Պ., 4. Շելոնիկով Ռ. Մ., 5. Լյուբիմով Ի. Պ., 6. Սավելյեվ Վ. Կ., 7. Ովչինիկով Ա. Ի., 8. Եմայեվա Խոզա, 9. Սիսնիկով Ի. Զ., 10. Կոմիսարով Խ. Գ., 11. Նիկոլայեվ Պ. Կ., 12. Սիմյոնով Կ. Յե., 13. Բաբայեվ Կ. Ի., 14. Սերգեյեվ Ա. Վ., 15. Գորսիկով Մ., 16. Չերնոկոզով Խ. Պ., 17. Ֆայգաչեվ Ա. Ի., 18. Յեժուևի Ն. Գ., 19. Բարանով Ա. Մ., 20. Ռումյանցեվ Ա. Ս., 21. Բոգդանովիչ Մ. Պ., 22. Նյուրենբերգ Ն. Ի., 23. Ֆիլասով Ի. Կ., 24. Սեկաչ Կ. Ֆ., 25. Պետրուսին, 26. Տրուսով, 27. Ռոգաչեվ Ե., 28. Կեպալե Ֆա. Ռ., 29. Զագեպին, 30. Վոժժովսկի Յե. Պ., 31. Սերգեյենկո Ֆա. Յա., 32. Սոպով, Ս. Ֆ., 33. Անիսիմով Ն. Ֆ., 34. Ռյաբովոյ Կ. Ա., 35. Խոբոլով Պ. Ա.:

Լենինի ջբանշան ստացողները 35 հոգի յեն: Սրանք լավագույններն են լավերից: Նրանցից շատերն ամբողջ կյանքը Գրոգնու վիշկաներում են անցկացրել, բարրիկադների վրա կռվել են վորձու թշնամիների դեմ: Նավթի վիշկաները խորհուրդների սեփականություն են դարձրել:

Ահա Վլադ Կոնյուրատիչ Սավելյեվը, դարբին: 38 տարի նա աշխատում է Հին Նավթահանքերում: Հրացանը ձեռքին մաքառել է սպիտակների դեմ, այժմ մուրճն առած մաքառում է նրա համար, վոր խորհրդային յերկիրը լիովին անկախ լինի, վոր ամբողջ աշխարհում սոցիալիզմը շուտ հաղթանակի:

Ծեր հասակում ընկեր Սավելյեվը սովորում է և ուսումնասիրում նոր տեխնիկան: Նա շատ արժեքավոր առաջարկներ է արել արտադրության աշխատանքը բարելավելու համար: Նա առաջինը յեղալի, վոր իր աշխատած գործարանում հարվածային բրիգադ կազմակերպեց և այլ բրիգադների հետ սոցմեցում սկսեց:

Համերաշխ ու լավ աշխատում է Սավելյեվի բրիգադը: Կարծես իրար են ձուլվել ու ապրում են մի ընտանիքի պես:

Ահա Իվան Պրոխորովիչ Լյուբիմովը: Առաջ նա բանվոր էր Հին Նավթահանքերում, իսկ այժմ Գրոգնու Նոր Նավթահանքերի գիրեկտորի փոխանորդն է:



Դարբին Վ. Կ. Սավելյեվը, վորը պազգեվատվել է «Լենինի շինարարության»:

1917 թվին Լյուբիմովը մտավ բոլշևիկյան կուսակցության մեջ: Նրա շարքերում նա կոչվում էր սպիտակների դեմ և ձերբակալության ու գնդակահարության մշտական սպառնալիքի տակ ընդհատակյա աշխատանք եր տանում: Նա բոլոր ճակատների վրա յեղել է, և յերբ թշնամիները բռնվել էին, սկսեց աշխատել նավթարդյունաբերության վերականգնման համար: Նա միաժամանակ յեռանդուն ուսումնասիրում էր նավթային գործը:



Առաջ ֆաշիստ Դ. Պ. Լյուբիմովը, վորը պարզեցվաւ Վեճիկի շխմշանով:

Ընկ. Լյուբիմովն իր ընկերներին ասում էր.

— Մեզ պետք է սովորել: Մենք դեռևս տղետ մարդիկ ենք, վատ ենք աշխատում: Յեթե չսովորենք լավ աշխատել, ապա կապիտալիստական արտասահմանը մեզ կհաղթի:

Ինքն էլ սովորում էր. բոլոր ազատ ժամերին զբոսերի ու դժանկարների հետն էր: Մի քանի տարուց հետո նա առաջին ռադիկալիզատորական առաջարկներն արավ:

— Գործադրել գազլիֆթ:

Գազլիֆթի մասին ընկեր Լյուբիմովը դասազրբերից իմացավ: Ահա թե ինչ է սա: Յերբ նավթաշերտում գազ քիչ է մնացել և նավթը զփվարությամբ է վեր բարձրանում, ապա պետք է հատուկ խողովակներով գազ մղել նավթաշերտի մեջ. գազը ճնշում է գործ դնում, ու նավթը վեր է բարձրանում: Սա յե գազլիֆթը:

Ամերիկայում գազլիֆթը վաղուց են գործադրում, սակայն մեզ մոտ նա չէր գործադրվում: Առաջին անգամ նա հին նավթահանքերում գործադրվեց ընկ. Լյուբիմովի առաջարկությամբ: Իվան Պրոխորովիչի առաջարկության գործադրությամբ Գրոզնեֆթը տարեկան կես միլիոն ուղւրի յե տնտեսում:

Հին նավթահանքերը շատ բանվոր մասնագետներ, կարմիր գիրեկտորներ են ավեր: Նրանցից է Խորոշիլովը, Յորդ նավթա-

թոր դործարանի բանվորը: Իսնվորները նրան յերկու անգամ, վորպես առաջավոր բանվորի, պարգևատրել են: Նա արտադրությունն է բարելավում և բոլշևիկորեն աշխատելու որինակ և ցույց տալիս: Իսնվորները նրան հերթապահ ինժեների պաշտոնով առաջ են քաշել:

— Մենք խավար մարդիկ ենք, — խոր կսկիծով ասում էր Իվան Պրոխորովիչը Լյուբիմովը:

Դա անցյալումն էր: Դա յերեկ էր: Անգրագետ նավթաքաշը՝ Ժելոնկային կաթ, մնացել է վորպես հիշողություն: Այսօրվա խորհրդային նավթային բանվորները բարդ մեքենաներ կառավարողներ են: Յերեկվա բանվոր Սերգեյեվը՝ այսօր Գրոզնու 1-ին նավթաթոր գործարանի գիրեկտորն է: Նրա ղեկավարությամբ գործարանը յերկու կարմիր դրոշի յե արժանացել:

Յերեկվա բանվոր ընկեր Շելոնիկովը՝ այսօր իր բրեզադի հետ միասին կազմում է պարաֆինի գործարանի լիակատար տեխնիկական վերակահա-



Իճիճեր Յ. Յ. Սերգեյեվի պարգեցվաւ Վեճիկի շխմշանով:

Յակովլևիչ Սերգեյենկոն է, Նոր նավթահանքերի գլխավոր ինժեները:



Պ. Ա. Խորոշիլովը, վորը պարգեցվաւ Վեճիկի շխմշանով:

Մասնագետները յերկար ու կասկածոտ ստուգում են Շելոնիկովի պլանը: Սակայն քաջքշելու բան չեն գտնում. ամեն ինչ ուղիղ է և լավ: Պլանը կատարեցին և պարաֆինի գործարանն այժմ համարյա յերկու անգամ և շատ զգալի աժան պարաֆին է տալիս:

Յեվ Սերգեյեվը և Շելոնիկովը «Լենինի չքանչան»-են ստացել:

Բացի բանվորներից, կենտգործկոմը Լենինի չքանչանով պարգևատրել է նաև այն մասնագետներին, վորոնք հարվածային են աշխատել և նպաստել են հնգամյա պլանը յերկու ու կես տարում կատարելուն:

Այդ մասնագետներից մեկը Յակովլևիչ Սերգեյենկոն է, Նոր նավթահանքերի գլխավոր ինժեները:

Ընկեր Սերգեյենկոն հմուտ ու յեռանդով ղեկավարում է նավթահանքերը: Բանվորներին սովորեցնում է հորատել, ղեկավարում է բանվորների տեխնիկական խմբակները: Վոչ մի հասարակական աշխատանքից նա չի հրաժարվում և առաջին հարվածայիններին է:

Ընկ. Սերգեյենկոյի շնորհիվ Նոր նավթահանքերը Գրոգնեֆթի կարևոր ձեռնարկություններիցն է: Արդյունահանվող նավթի 90 տոկոսը Գրոգնեֆթը ստանում է Նոր նավթահանքերից:

4 ՍՈՒՀԱՄՄԵԴ ԳՈՐՏԻԿՈՎ ՅԵՎ ԻԴՐԻՍ ԲԱՇԱՅԵՎ

Ցարական ժամանակները անիծյալ ժամանակներ էյին... Չեչնիայում ո՞վ չի հիշում այդ ժամանակները:

Ծերերն ատելությամբ և անեծքներով հիշում են, թե ինչպես ռուս զենեքալները յեկան ու ավերեցին չեչենների առւնները: Չեչեններին քչեցին վայրի և անբերրի տեղեր:

Չեչեններին չեյին թողնում մանել Գրոգնի, ուր կապիտալիստները կողոպտում էյին նրանց նավթը:

Իսկ յեթե պատահում եր, վոր չեչեններին նավթահանքերն էյին ընդունում, ապա նրանց տալիս էյին ամենաժանր, կեղտոտ և տաժանակիր աշխատանքը:

Գնեքալների թնդանոթները դադարեցին փորոտալուց: Արյունահեղ անցյալն էլ չկա:

Չեչնիայի լեռներում կառուցվում են գործարաններ, հանքահորեր, ակումբներ, հիվանդանոցներ: Այդ բոլորը չեչեն աշխատավորների համար է:

Կար ժամանակ, յերբ չեչենների և ռուսների մեջ արյունալի յերկպառակություն կար: Լեռնային գյուղերում—առւններում մայրերը զավակներին ատելություն էյին ներշնչում զեպլի «ուրուսները»: Կազակ մայրերը, հովիտներում, մանուկներին որորելով, յերգում էյին:

«Չար չեչենը ցած է սողում»,

Սրում է իր սուրը»

«Չար» չեչենն էլ չկա: Չկան «ուրուսները»:

Բոլոր ազգությունների աշխատավորները նոր, սոցիալիստական կյանք են կառուցում: Մեր յերկրում բոլոր ազգությունները հավասար են:

Կուլակներն ու մոլլաները (մուսուլմանների տերտերները) փորձում են չեչենների և ռուսների միջև վառ պահել փոխա-

դարձ ատելությունը—հնի ժառանգությունը: Սակայն լեռնցի չքավորները քչեցին կուլակներին, փակում են մզկիթները (ազդեթարանները), մանում են կոլտոտեսության մեջ և գնում են գործարան:

— Բարի գալուստ,—ասում են գրոգնեցիք ամեն մի գործարան մտնող չեչենին:

1931 թվին Չեչնիան Գրոգնու նավթահանքերին տվեց 10000 բանվոր, վորոնք սովորեցին բանվորական դասնիթացներում ու ֆաբրիկարանային աշակերտության դպրոցներում:

Չեչեն բանվորներից յերկու հոգի Լենինի չքանչան են ստացել: Դրանք Մուհամմեդ Գորաիկով և Իգրիս Բաշայեֆն են:

Նրանք յերկուսն էլ Չիչնիան ու Գրոգնին պաշտպանել են սպիտակ բանդաներից: Գորաիկովը Գիկագոյի կարմրագրոշ վաշտի պարտիզաններիցն է: Առաջին նավթաթոր գործարանի ազգային փորքամասնություններին պատկանող բանվորների մեջ նա սոցմրցում մտցրեց: Նա ինքն էլ որինեկելի հարվածային է և քանիցս անգամ պարգևատրվել է:

Իգրիս Բաշայեֆը չքավոր գյուղացի յեր: Կարիքը նրան ստիպել էր թողնել առւր և գնալ Գրոգնի վաստակի: Նա վախենում էր քաղաք գնալ, նոր կյանք սկսել, անձանոթ կյանքով ապրել: Մոլլան նրան վախեցնում էր թե՛

— Կնահատակն քեզ: Չգուշացիր «ուրուսներից»: Չգուշացիր նրանց անիծյալ մեքենաներից: Մեքենաները հաշմանգամ են անում մարդկանց և Ալլահին դեմ բաներ են:


Այժմ Բաշայեֆը աշխատում է Բենոյակիյ հետախուզական աշխատանքների վրա, վորպես արգելակավար: Յեվ յեթե նրան հարցնեն, թե ուզո՞ւմ է արդյոք գյուղ վերադառնալ, նա լուռ կժպտա և գլուխը բացասական կորորի:

Այդ նրանից է, վոր բոլշևիկ քաղաքը նրան, չքավոր չիչեն չքավոր Բաշայեֆին սիրալիբ ընդունեց: Այդ նրանից է, վոր նա գրագետ դառավ և հասկացավ, վոր վիշկաները, գործարանները, կրեկինգներն իրան և իր նմաններին են պատկանում:

Ընկեր Բաշայեֆը չորս տարի աշխատեց Սկերտչ-Կերտիչ հորի վրա: Ճանաչեց և սիրեց ամեն մի մեքենա, ամեն մի պտուտակ: Գրոգնու պրոլետարիատը մեծ հույսեր էր դրել Սկերտչ-Կերտիչի նավթահորի վրա. նա պետք էր նոր ուժեղ նավթաշերտ բաց աներ:

Սրա մասին կուլակներն էլ գիտեյին: Յեվ նրանք վորոշեցին այրել նավթահորը, հողով լցնել այն, այրել մեքենաները:

Սակայն, յերբ կուլակային ավագակախումբը հարձակվեց նավթահորի վրա, ապա Սկիրտչ-Կերտիչի չեչեն բանվորները գնեքը ձեռներին նրանց դիմավորեցին: Նավթահորը պաշտպանող բանվորների ղեկավարը՝ Իդրիս Բաշայեֆն երբ հարձակվողներին բռնեցին և դատի հանձնեցին: Սկերտչ-Կերտիչի նավթահորը փրկված երբ:



ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ՄԱՐՏԱԿԱՆ ՓՈԽԱՐԻ-
ՆՈՂՆԵՐՆ ԵՆ ԱՃՈՒՄ

1. ՊԻՈՆՆԵՐԱԿԱՆ ԳՐՈՇ

Մի կարծեք, թե նավթահանքերում միշտ ամեն բան գնում և յուզի պես և հաղթանակներն իրենց սեփական վոտներով են յեկել: Վրիժ:

Նավթային բանվորները հաղթանակները ձեռք են բերել ծուլերի, կորզիչների, յենթակուլակների, վնասարարների, կուսակցության գլխավոր գծից շեղվող ոպորտունիստների դեմ համառ ու կատաղի պայքար մղելով:

Բոլոր բանվորները հարվածայիններ չեն: Կան նայեվ այնպիսիները, վորոնք մտածում են միայն քիչ աշխատելու և շատ ստանալու մասին:

Ահա նրանցից մեկը: Հայտնի վայրափոխիկ է նա և շատ ավա մեջ վեց գործարան և փոխել: Ծուլն է, նմանը չկա. թե վարպետը յերեսը շուռ ե տալիս, նա իսկույն ձեռները ծալում՝ նստում է: Կորզող է: Նրանից միայն կարելի չէ լսել թե՛

—Ո՛հ, նորմաները բարձր են: Ե՛հ, աշխատավարձը յե՛րբ պիտի ավելանա:

Սակայն ինչի՞ նրա աշխատավարձը պիտի ավելանա, յեթե նա իր նորմաները չի կատարում:

Վողջ բրիգադն էլ ծիծաղում է նրա վրա:

—Հո՞, հո՞, հո՞: Միտյա, Միտյա, Միտյուշա, քիթդ ելի՞ յես կախել: Հա, նորման բարձր ե ասում ես: Բայց մենք մտածում ենք մեր նորմաներն ավելացնել:

Միտյուշայի սիրտը դող ընկավ:

—Չե՛. ճի՛շտ եք ասում. թե՞ հանաք ե: Ցեղբայրներ... պետք չի նորման ավելացնել. խնդրում եմ այդ բանը մի անեք:

—Նա խնդրում է: Միտյուշա, ավելի խնդրիր, թե չե, մեկ էլ տեսար, ավելացրինք:

—Քեզ, Միտյուշա, պետք է վառարանի մոտ պառկել ու թան խմել։ Մեր ճամբաները, վոնց յերեվում ե, այլ են։ Մենք Ամերիկայից ել կանցնենք։

Միտյայի նման «քաջերի» պատճառով Գրոզնու նավթահանքերը 1929 թվին, հնգամյակի 2-որդ տարում, մեծ ձեռքավածքներ ունեցան։

Պլանները չեյին կատարվում։ Գործալքումներն աճում էին։ Հորատող մեքենաները փչանում էին։ Հորերի թեքվածությունը չեր պահպանում։ Սոցմրցումը թույլ եր ընթանում։

Նավթաթոր գործարանները բենզին և քարյուղ թորելու պլանները չեյին իրագործում։

Ահա այն ժամանակ, 1929 թվին, Գրոզնու պիոներներն առաջին գրոհը կազմակերպեցին։

Նրանք նպատակ էյին դրել, վոր՝



Ինչո՞ւ դու հարվածային չես

Ամեն մի վաշտ ու ողա կմշակի Գրոզնեֆթի արգֆինալանը, շեֆություն վերցնի նավթահորերի և սոցմրցման տախտակների վրա, ծնողներին քաշի բանվորական հարվածային բրիգադներին մեջ։ Վաշտերը ցեխերի ու նավթահորերի հետ կապ ունենալու հատուկ բրիգադներ ունեցան։

Տղերքը գործարանների ու նավթահանքերի կոմիտեների ներկայացուցիչների հետ հավաքվում էյին և միասին քննար-

կում սոցմրցման պայմանագրերի նախագծերը։ Հետո կազմակերպեցին պիոներների և բանվորների միացյալ կոնֆերանսներ։ Այդ կոնֆերանսներում անտեսվարները զեկուցում էյին արտադրական պլանների կատարման մասին։

Թվերով զինված պիոներները շարժվեցին դեպի վիշկաներն ու ցեխերը։

—Ընկեր բանվորներ։ Մենք, ձեր զավակները, պահանջում ենք, վոր դուք բոլշևիկներն աշխատեք։

Նման լոզունգներով վաշտերն ու ողակները նավթահանքերն յեկան։

Նրանք մոտենում էյին ամեն մի բանվորի և հարցնում էյին՝

—Դուք հարվածային եք։

Յեվ յեթե պատասխանողը «վոչ» եր ասում, տղերքը միաձայն հարցնում էյին։

—Ինչո՞ւ։

Յեվ հենց տեղն ու տեղում պիոներները նրան առաջարկում էյին հարվածային բրիգադի մեջ մտնել և իրենց, պիոներների հետ սոցիալիստական մրցման պայմանագիր կապել։

Պիոներները մի շաբաթվա մեջ գործարանային ռալյոնում հարվածային բրիգադների մեջ մտցրին 219 բանվորի և 230 բանվորների հետ ել յերկկողմանի պայմանագրեր կնքեցին։

Առաջին յիսույթը փայլուն հաջողություններով վերջացավ։

2. ԱՉՔԸ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՎՐԱ ՊԱՇԵԼ

Հնգամյակի յերրորդ վճռական տարվա սկզբում Գրոզնույում նոր ձեռքավածք առաջացավ։

Յերկաթուղին չեր հասցնում նավթը տեղափոխել։ Նավթը մնում եր Գրոզնիյում։

Գրոզնու յերկաթուղային հանգույցի պիոներները վորոշեցին այդ առթիվ կոնֆերանս հրավիրել և ստեղծված դրությունը քննություն առնել։

Կոնֆերանսում հարցը քննելուց հետո, նրանք նամակ գրեցին Հյուսիսային Կովկասի յերկաթուղային բանվորների պիոներ զավակներին։

«ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԿԵՐՆԵՐ

Մեր արանապորտը այժմ նավթ տեղափոխելու մեջ կաղում ե։ Մենք բավարար չափով ցխտերները չունենք և

յեղածներէց շատերն ել, ընկնելով ԽՍՀՄ-ի հեռավոր անկյունները, հաճախ յերկար են մնում աշխատել և ժամանակին չեն վերադառնում:

«Մեր գործարաններին, ֆաբրիկաներին, խորհրդատեսություններին, կոլանտեսություններին վառելանյութ հասցնելու գործը արագացնելու համար, մենք պետք է ընդհանուր ուժերով պայքարենք ցիստերնաները շուտ վերադարձնելու համար:

«Այս նպատակով Գրոզնու յերկաթուղային հանգույցի պիոներները նավթային արդյունաբերութեան բանվորների պիոներների հետ միասին ղեմում ենք Հյուսիսային Կովկասի յերկաթուղային բանվորների պիոներ գավալներին և խընդրում ենք:

«Հսկել, վոր ցիստերնաները տեղ հասնելուց հետո անհապաղ վադարկվեն և շտապ հետ ուղարկվեն:

«Աշխատել, վոր վառելանյութերի տեղափոխման հատկացված վնասքները փակուղիներում չմնան, ամբողջ որերով կայարաններում չկանգնեն, այլ ուղեցուցակին համաձայն անարգել շարժվեն:

«Հետևել, վոր ամեն տեսակի փաստարարները չփչացնեն ցիստերնաները և վառելանյութը չգողանան: Նման դեպքերի մասին համապատասխան մարմիններին անհապաղ հայտնել:

«Այդ բոլոր պարտականութիւնները մենք մեզ վրա վերցնում ենք: Միաժամանակ խոստանում ենք հսկողութիւն ունենալ վազոն նորոգող ցեխերի վրա վոր ցիստերնաները ժամանակին և լավ նորոգվեն:


«Պարտավորվում ենք հետևել, վոր ցիստերնաները լավ մաքրվեն և բեռնավորման տեղում ավելորդ ժամեր կանգ չառնեն:

«Այս աշխատանքը շատ լուրջ աշխատանք է: Մենք պետք է միացյալ ուժերով մեր ծնողներին ոգնենք, վոր յերկաթուղային հնգամյակը յերեք տարում, իսկ նավթարդյունաբերութեան հնգամյակը յերկու ու կես տարում իրագործվեն:

«Հույս ունենք, վոր մոտակա որերում, «Լենինսկայա փուլատա» թերթի միջոցով մեր նամակի պատասխանը կստանանք:

(Գրոզնու յերկաթուղային հանգույցի պիոներական կոնֆերանս):

Ռոստովի, Արմավրի, Հանքային ջրերի, Կովկասկու պիոներ-տրանսպորտիկներն այս նամակին արձականդեցին: Գրող-նու պիոներների հետ միասին նրանք ոգնեցին այն բանին, վոր նավթը ազատվի բյուրոկրատների և անդադուխների ստեղծած պատնէշներից:



Նավթը լցվում է ցիստերնաները

3. ՊԱՏԱՆԻ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ ՌԱՊՈՐՏ ԵՆ ՏԱԼԻՍ

Ահա Գրոզնու պիոներների ռապորտը: Նա տպված էր «Լենինսկայա փուլատա» թերթում:

«Մեր հայրերը նավթի հնգամյա պլանն իրագործեցին 2 1/2 տարում:


«Մենք պիոներներն մեր մանկական ուժերի չափով նրանց ոգնում եյինք:

«1931 թվի առաջին յերեք ամսում պիոներները ցեխերի, նավթահորերի, գործարանների հետ 134 կովեկտիվ պայմանագրեր են կնքել: 248 անհատական պայմատիվ կնքված են բանվորների ծնողների, տեխնիկական նաղրեր կնքված են բանվորների ծնողների, տեխնիկական կազմի ինժեներների հետ: Մենք 724 ուսցիոնարի գատորական առաջարկներ ենք հաժարել: 85 բանվորների քաշել ենք հարվածային բրիգադների մեջ: Շեֆության ենք վերցրել 18 նավթահորային վաշտերի և 13 գալրոցների վրա, կազմակերպել ենք 26 արտադրական անկյուն: Հայտաբերել ենք 42 գործալիքներ: Անցկացրել ենք 35 գիշերային յեւույթ դեպի արտադրութիւն: Կազմակերպել ենք 194 զրույցներ»:

«Անկազմակերպ 347 մանուկների ընդունել ենք պիտներական շարքերը և 79 պիտներների հանձնել ենք կոմյերիտմիության»:
«Մենք ձեռքերը ծալած չենք նստում. մենք պարծենում ենք մեր հաղթանակներով»:

Գրողնու պիտներների կողմից
Չեչնիայի մարզի Պ. Պ. բյուրո:

Գրողնու կարմրադրոշ պրոլետարիատի—նավթային բան-
վորների հաղթանակը տեսնելով, Գրողնու պիտներներն ել ավի-
լի ջերմ լծվում են ուսման գործին՝ սոցիալիզմ կառուցվող
բազմակողմանի կառուցողներ դառնալու համար:



Отв. редактор
В. К. Цовьян
Техн. редактор
Г. М. Маркарян

№ 2041

Ау—52

Сд. в набор 21/XII—1932 г.
Сд. в печать 31—I—1933 г.
Объем 3¹/₂ листа
Тираж 3000 экз.

полкрайлит № 01964 Газ.-кн. тип. СККПО. Статформат А5-148x210 Заказ № 6525

Гор. Ростов на Дону.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Ազգային գրադարան



NL0143054

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ստորերկրյա գտնվ

1. Խորհրդային կրակ	3
2. Ինչպես և առաջացել նավթը	4
3. Վերջա	6
4. Նավթն սպասարկում և տեխնիկային	8
5. Նավթաթոր գործարաններ	9

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

Փայտաբ Գրողնու վիշկաների համար

2. Չեչնիայի ստորերկրյա հարստությունը	10
2. Նավթի հոտ և գալիս	12
3. Պատերազմ	14
4. «Յեկիլ պայքարի»	15
5. Վրեժ	17
6. Բերդանական կրուկների տակ	19

ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

Սեգիլիզը հաղթանակում և

1. Յերկու ումբ	23
2. Հեռագիրը	25
3. Հինգ պատճառ	28
4. Նավթը յերկրորդ հնգամյակում	31

ԳԼՈՒԽ ԶՈՐԵՐՈՐԴ

Տեխնիկան վնասում և ամեն ինչ

1. Դուրից դեպի տուրբինային հորատում	33
2. Կոիվ շատրվաններին	35
3. Ո՛ւր և նավթը	35
4. Կրեկինդներ	37
5. Արշավ համալսարանին ուսկորդի համար	37
6. Նավթին ճանաչվար	40
7. Նավթի ուղին ձգվում և դեպի կոլանսեպությունները	41

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Գրողնու հերոսները

1. 47—0 և 34—0	44
2. Հաղթանակ փառաբանների դեմ	46
3. Հավազույնները բավերից	48
4. Մուհամմեդ Գորախկով և Իզբիլա Բաշայիվ	52

ԳԼՈՒԽ ՎԵՅԵՐՈՐԴ

Մարտական փոխարկողներն են ամուս

1. Պիտներական գրոհ	55
2. Աչքը տրանսպորտի վրա պահել	57
3. Պատանի պիտներները ապստամբ են տալիս	58

